Հայաստանում գենդերային ծրագիր

Հարակայուն վայրի հավաքի դասընթաց

Հարակայուն վայրի հավաքի դասընթացը կազմվել է Համաշխարհային բանկի խմբի Հայաստանում գենդերային ծրագրի պատվերով, որն իրականացնում է Միջազգային ֆինանսական կորպորացիան (IFC)՝ Ավստրիայի ֆինանսների դաշնային նախարարության և Համաշխարհային բանկի՝ գենդերային հավասարության բազմադոնոր ամպհովանի կառույցի ֆինանսավորմամբ: Դասընթացը կազմել է Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն (ICARE) հիմնադրամը:

Հայաստանում գենդերային ծրագիր

Համաշխարհային բանկի խմբի Հայաստանի գենդերային ծրագրի նպատակն է աջակցել վայրի հավաքչությամբ զբաղվող կանանց՝ արտադրողականության բարձրացման, աղքատության կրճատման և տնտեսական աճի խթանման նպատակով: Հայաստանի գենդերային ծրագիրն իրականացնում է Համաշխարհային բանկի քույր կազմակերպություն և Համաշխարհային բանկի խմբի անդամ IFC-ն՝ Ավստրիայի ֆինանսների դաշնային նախարարության և Համաշխարհային բանկի՝ գենդերային հավասարության բազմադոնոր ամպհովանի կառույցի ֆինանսավորմամբ:

Այս եռամյա ծրագիրը (2017-2020թթ.) խորհրդատվություն է տրամադրում ոլորտի իրավակարգավորման դաշտի բարելավման ուղղությամբ և օգնում է կանանց զբաղվել գործունեության առավել բարձր արտադրողականություն ունեցող տեսակներով և դյուրինացնել նրանց շուկայամուտը՝ նպաստելով գնորդների և արտադրողների հետ նրանց կապի ամրապնդմանը:

Քանի որ Հայաստանի ամենաաղքատ բնակիչներից շատերը հույսը դնում են վայրի հավաքչության վրա՝ որպես իրենց եկամտի հիմնական աղբյուրի, կառավարությունը վայրի հավաքի արժեշղթան նախանշել է որպես աղքատության կրճատման կարևոր ոլորտ, հատկապես՝ երկրի բարձրլեռնային և հեռավոր շրջաններում:

Ծրագրի կողմից միջամտության համար վայրի հավաքի արժեշղթայի ընտրությունը կատարվել է դրա ներուժի գնահատման հիման վրա՝ այն նկատառումով, որ այն դառնա Հայաստանի մասշտաբով լավ զարգացած և շահութաբեր արժեշղթա, ընդ որում՝ կանանց առավել արդյունավետ մասնակցությամբ: Վայրի հավաքի արժեշղթայի բարելավումն ու զարգացումը շատ կարևոր են, քանզի՝ (i) մարզերում ամենաաղքատ մարդիկ հույսը դնում են այս արժեշղթայի, որպես եկամտի հիմնական աղբյուրի, վրա. (ii) ոլորտում գերիշխում են կանայք, որոնց համար նոր հմտություններ ձեռք բերելը կարող է օգտակար լինել՝ գործունեության ավելի բարձր հավելյալ արժեք ստեղծող տեսակների մեջ իրենց ներգրավվածությունն ավելացնելու առումով, (iii) կանանց համար հասանելիության արգելքները քիչ են (օրինակ՝ ժամանակի և շարժունության, տեխնոլոգիաների ու միջոցների հասանելիության և մշակութային խոչընդոտների առումով ավելի քիչ պահանջներ են ներկայացվում), իսկ աճի ներուժը հսկայական է:

Հայաստանում գենդերային ծրագրի նպատակն է վայրի հավաքչությամբ զբաղվող կանանց օգնել երկու եղանակով: Նախ, ծրագիրն օգնում է զարգացնել կին աշխատողների և ձեռներեցների գիտելիքներն ու հմտությունները, որպեսզի նրանք կարողանան զբաղվել ավելի բարձր արժեք ունեցող գործունեության տեսակներով և բարելավել իրենց կապերն արտադրողների ու նոր շուկաների հետ՝ օգնելով ավելի մեծ եկամուտներ ստանալ: Այս առումով նախագիծն աշխատում է Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիայի (ՀԵԿԱ) հետ՝ կանանց հավաքի ավելի լավ մեթոդներ, պահեստավորում ու փաթեթավորում սովորեցնելու, նրանց մարկետինգային հմտությունների բարելավման

հարցում օգնելու և գնորդների ու արտադրողների հետ նրանց կապերն ամրապնդելու նպատակով:

Երկրորդ, ծրագիրն աշխատում է ՀՀ կառավարության հետ՝ ոլորտի զարգացումը խթանելու համար համապատասխան ռազմավարություն մշակելու և իրավակարգավորումների առկա խոչընդոտները վերացնելու ուղղությամբ: Նպատակն է օգնել արտադրողականության և կանանց եկամուտների բարձրացման հարցում, որն իր հերթին օգնում է խթանել տնտեսական աճը և կրճատել աղքատությունը: Իրավակարգավորող բարեփոխումների արդյունավետ իրականացումն ապահովելու համար անհրաժեշտ է ավելի մեծ թվով կանանց ներգրավել պաշտոնական որոշումների ընդունման գործընթացում՝ մասնավոր հատված - պետություն երկխոսության միջոցով: Այդ առումով, ծրագիրը նաև նպաստում է առանցքային շահակիցների, այդ թվում կանանց բիզնես ընկերակցությունների, գնորդների, ոլորտում ստեղծված ցանցերի և կառավարության գործունեության համակարգման բարելավմանը:

2018. Միջազգային ֆինանսական կորպորացիա: Հեղինակային իրավունքները պաշտպանված են:
2121 Pennsylvania Avenue, N.W.
Washington, D.C. 20433
Internet: www.ifc.org

Սույն աշխատության նյութը պաշտպանված է հեղինակային իրավունքով: Առանց համապատասխան թույլտվության աշխատության մասերի կամ ամբողջ աշխատության պատճենումը և (կամ) փոխանցումը կարող է դիտարկվել որպես համապատասխան կիրարկելի օրենքի խախտում: IFC-ն չի երաշխավորում սույն աշխատության բովանդակության ճշգրտությունը, հուսալիությունը և ամբողջականությունը կամ այստեղ առկա եզրակացություններն ու դատողությունները և որևիցե պատասխանատվություն կամ պարտավորություն չի կրում նյութի բովանդակության մեջ եղած բացթողումների կամ սխալների (ներառյալ, առանց սահմանափակումների, տպագրական և տեխնիկական սխալները) կամ դրանց վրա հիմնվելու համար:

Բովանդակություն

Դասընթացի նպատակները 8
Բաժին 1 9
Խոտաբույսերի հիմնական տեսակների բնորոշումը 9
Վայրի բույսեր և հատապտուղներ 10
Բաժին 2 32
Հարակայուն վայրի հավաք: Կազմակերպումն ու ընթացակարգերը 32
Հարակայուն վայրի հավաք 33
Հարակայուն հավաքի ընթացակարգերն ու մեթոդները 33
Վայրի հավաքի պայմաններն ու անհրաժեշտ պարագաները 34
Ինչպես հավաքել բույսերն ու հատապտուղները 34
Որտեղից հավաքել բուսատեսակները 36
Վայրի հավաքի պայմաններն ու պարագաները 36
Բաժին 3 40
Հավաքից հետո բույսերի և հատապտուղների մշակումն ու պահեստավորումը 40
Հատապտուղների փոխադրումն ու պահպանման պայմանները 41
Հատապտուղների փոխադրումը 41
Հատապտուղների պահպանումը 42
Խոտաբույսերի մշակումն ու պահեստավորումը հավաքից հետո 42
Խոտաբույսերի մաքրման գործողությունները 42
Խոտաբույսերի չորացման պայմաններն ու եղանակները 43
Չորացման եղանակները 44
Բնական չորացումը 44
Նախնական փաթեթավորում 45
Պահեստավորում և պահեստային պայմաններ 46
Բույսերի վնասատուները և դրանց դեմ պայքարի մեթոդները 47
Պայքարի միջոցառումները 47
Մաքրումն ու ախտահանումը 48
Բաժին 4 49
Շուկայահանումը և շուկայահանման միջոցները 49
Շուկայահանման Էությունը 50
Շուկայահանման SS գործիքներ 51

Բաժին 5 54
Առաջնորդության և թիմային աշխատանքի կարևորությունը 54
Թիմային աշխատանքի կարևորությունը գյուղական համայնքներում 56
Բաժին 6 58
Վայրի հավաքի արժեշղթան և սեփական ֆինանսների արդյունավետ կառավարումը. 58
Արժեշղթայի էությունը 59
Ի՞նչ է վարկը 64
Վարկային պայմանագրեր 65
Հավելված 68
Կարմիր գրքում գրանցված և հավաքի համար արգելված բույսերը 68

Դասընթացի նպատակները

Այս դասընթացը մշակվել է Հայաստանում վայրի հավաքի մասնակիցների կարիքների մանրակրկիտ ուսումնասիրության միջոցով և ուղղված է գյուղական վայրերում կանանց շրջանում ձեռնարկատիրական հմտությունների զարգացմանը և վայրի հավաքի ոլորտում արժեշղթային մասնակցության բարձրացմանը:

Դասընթացը ներառում է հավաքի ենթակա հիմնական ապրանքատեսակների, վայրի հավաքի հարակայուն գործելակերպերի, բույսերի և հատապտուղների մշակման և պահեստավորման մասին տեղեկություններ, ինչպես նաև տրամադրում է առաջնորդության և թիմային աշխատանքի, շուկայահանման և ֆինանսների կառավարման հմտություններ, որոնք կնպաստեն վայրի հավաքի արժեշղթայի մասնակիցների համար ավելի բարձր շահութաբերության ապահովմանը:

Դասընթացում առաջարկվող բոլոր բաժինները դուրս են բերվել ՀՀ-ում Միջազգային ֆինանսական կորպորացիայի աջակցությամբ իրականացված «Վայրի հավաքի արժեշղթաների ուսումնասիրություն» հետազոտության միջոցով և արտացոլում են վայրի հավաքով զբաղվողների, վերամշակողների և շահառու կառույցների մասնակիցների կարծիքը, ինչպես նաև «Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն» (ICARE) հիմնադրամի փորձագետների առաջարկությունները:

Ձեռնարկում ներառված բաժիններն են՝

Բաժին 1. Բույսերի հիմնական տեսակների բնորոշումը
Բաժին 2. Հարակայուն վայրի հավաք. կազմակերպումն ու ընթացակարգերը
Բաժին 3. Հավաքից հետո բույսերի և հատապտուղների մշակումն ու պահեստավորումը
Բաժին 4. Շուկայահանումն ու շուկայահանման միջոցները
Բաժին 5. Առաջնորդության և թիմային աշխատանքի կարևորությունը. կանանց դերը
Բաժին 6. Վայրի հավաքի արժեշղթան և սեփական ֆինանսների արդյունավետ կառավարումը

Բաժին 1.

Խոտաբույսերի հիմնական տեսակների բնորոշումը

Այս մոդուլի շրջանակում մասնակիցները կծանոթանան Հայաստանում աճող խոտաբույսերի և հատապտուղների հիմնական տեսակներին ու սորտերին, որոնք պահանջարկ ունեն տեղական և արտասահմանյան շուկաներում: Ներկայումս Հայաստանում գոյություն ունեցող բույսերի և հատապտուղների շատ փոքր մասն է օգտագործվում առևտրային նպատակներով: Հավաքողներին պետք է խրախուսել, որ իրականացնեն իրենց սեփական հետազոտությունը՝ Հայաստանում աճող վայրի բույսերի և հատապտուղների տեսակների և օգտագործման եղանակների վերաբերյալ բավարար տեղեկատվություն ունենալու համար:

Ուսուցման արդյունքները.

Մոդուլի ավարտից հետո մասնակիցները պետք է կարողանան՝

- տարբերակել Հայաստանում աճող բույսերի տարատեսակները,
- վերամշակող ընկերություններին մատակարարել վայրի արտադրատեսակների նոր տեսակներ,
- իմանալ և բացատրել վայրի բույսերի հիմնական և օգտակար հատկությունները:

Մեթոդները.

Դասընթացի մասնակիցներին տրամադրվում է այս ձեռնարկը՝ տարածված խոտաբույսերի և հատապտուղների պատկերներով: Դասընթացավարները կարող են լինել Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ագրոէկոլոգիայի և կենսաբազմազանության ամբիոնի դասախոներ, արդյունաբերության ոլորտի մասնագետներ, դեղաբույսերի և թեյի հավաքով և վերամշակմամբ զբաղվող կազմակերպությունների և հասարակական կառույցների աշխատակիցներ: Վայրի հավաքով զբաղվող կանանց կտրամադրվի թարմ տեղեկատվություն պահանջվող վայրի խոտաբույսերի և հատապտուղների մասին, որը կխրախուսի նոր տեսակների հավաքը:

Ուսուցման ժամանակը. 2 ժամ

Վայրի բույսեր և հատապտուղներ

Կենսական նշանակության հարցերի լուծման ձևերն ու մեթոդները մարդկության զարգազմանը զուգընթաց պատմական անդադար էվոլյուցիայի են ենթարկվել: Կենսական նշանակության հարցերի մեջ իր ծավալուն բաժինն ունի սնունդը: Հնում հավաքչությունն ու որսորդությունը եղել են գոյատևման միջոց, սերնդեսերունդ կատարելագործվել և արդեն ներկայացնում են ընդգրկուն մի բնագավառ, որտեղ բնական պաշարների կիրառումը առևտրային արժեք ու նշանակություն ունի: ՀՀ տարածքն ունի բավականին հարուստ և բազմազան բուսական աշխարհ: Աշխարհում ամենաբարձր ցուցանիշներից է 1 քառակուսի կմ-ին բաժին հասնող բուսատեսակների քանակը (մոտ 100 տեսակ): Տարածքի ընդգրկվածությամբ և բնակչության շրջանում իրենց օգտագործմամբ պայմանավորված՝ կարելի առանձնացնել առավել տարածված բույսերը:

ՈՒՐՑ ՍՈՂԱՑՈՂ

Thýmus

(դաշտուրց, թյում, խոռ, ղռի, վայրի ծոթրին, մեշ)

Նկարագրություն ՝ 10-30 սմ բարձրությամբ, գետնամերձ ցողունով, հիմքում՝ փայտացած, խիստ ճյուղավորվող բույս է, որին հատուկ են ձվաձև կամ նշտարաձև, հակադիր դասավորությամբ տերևները: Ծաղկում է հունիս-սեպտեմբերին: Ծաղիկները մանր դեղին, մանուշակագույն կամ սպիտակ են:

Ընդգրկման տարածք՝ Հայաստանում գոյություն ունի 5 տեսակի ուրց: Տարածված է գրեթե բոլոր մարզերում: Հատկապես աճում է չոր և անմշակ վայրերում , ենթաալպյան մարգագետիններում, սարերի քարքարոտ լանջերին և այլն:

Հավաք՝ Հումք է ծառայում բույսի վերգետնյա հատվածը ամբողջությամբ՝ ծաղիկներ,տերևներ, ցողուն: Առաջին հավաքը իրականացվում է հունիս-հուլիս ամիսներին: Երկրորդ՝աշնանային հավաքը կարելի է իրականացնել սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին:
1կգ չոր հումք ստանալու համար հարկավոր է 3-4 կգ թարմ խոտաբույս:

Օգտակար հատկություններ
օգտագործվում է որպես դեղամիջոց, թեյ, համեմունք: Այն հակաբորբոքիչ է, օգտակար է սիրտ-անոթային, երիկամային և լյարդային համակարգերին, վերացնում է գլխացավը, մաքրում է արյունը, կազդուրում ստամոքսը, իջեցնում է արյան ճնշումը և այլն: Ուրցը ծանրամարս ուտելիքը դարձնում է դյուրամարս: Այն պարունակում է K, Ca, Mg և այլ քիմիական տարրեր:

Mentha

(Անանուխ, նանա, անուխ, քարանուխ, քարընուշ, պիտան)

Նկարագրություն ՝ բազմամյա խոտաբոյս, բնորոշ սուր հոտով: Բարձրությունները խիստ զանազան են, տերևները երկարավուն են, պատված բնորոշ թավշյա ծածկով: Ծաղկում է հիմնականում հուլիս-օգոստոս ամիսներին:

Ընդգրկման տարածքը ՝ տարատեսակները տարածված են գրեթե բոլոր մարզերում, ցրտադիմացկուն է, աճում է հիմնականում խոնավ, լուսավոր պայմաններում:

Հավաք՝ Որպես հումք կիրառվում են թե՛ տերևները, թե՛ ծաղիկները: Կոշտացած ցուղունները պետք չէ հավաքել: Հավաքի ժամանակաշրջանը սկսվում է մայիսի վերջ-հունիս ամիսներից և շարունակվում մինչ ուշ աշուն: 1կգ չոր հումք ստանալու համար հարկավոր է 3-4 կգ թարմ խոտաբույս:

Օգտակար հատկություններ՝ Կիրառվում է ոչ միայն բուսահումքը, այլ նաև դրանից ստացվող եթերայուղերը: Դաղձը բարձրացնում է դիմադրողականությունը, բարելավում է մարսողությունը, կանխում սրտխառնոցը, նպաստում լեղարտադրմանը, ուղեղի, սրտի և ստամոքսի աշխատանքին, հանդիսանում է թարմացնող և ցավազրկող միջոց: Պարունակում է 1,5-3,5% եթերային յուղ, 3,5-12% տանին, 50-80% մենթոլ և այլն:

Origanum vulgare

(զվիրակ, թորթ, թորթիկ, կատավան, սևածաղիկ)

ՀՀՀ

Նկարագրություն՝ 30-60սմ բարձրությամբ բազմամյա խոտաբույս է: Ունի ճյուղավորված, սողացող կոճղարմատ,կարմրականաչագո րշավուն ցողուն, կարմրամանուշակագույն ծաղիկներ: Պտուղը բաղկացած է կլոր, դարչնագույն 4 սերմիկներից: Ծաղկում է հուլիսին, պտղակալում օգոստոս-սեպտեմբերին:

Ընդգրկման տարածքը

Տարածված է չոր անտառային և հովտային մարգագետիններում, անտառային բացատներում, գետահովիտներում:

Հավաք՝ Հումք է ծառայում ծաղկման փուլում՝ մինչև պտուղների ի հայտ գալը: Օգտագործվում է ցողունը՝ տերևներով և ծաղիկներով (մերկ ու կարծրացած ցողուններն առանձնացվում են:) Հումքը մթերվումէ հուլիս-օգոստոս ամիսներին: 1կգ չոր հումք ստանալու համար անհրաժեշտ է 2-3կգ թաց հումք:

Օգտակար հատկություններ՝

Խնկածաղիկը ունի նուրբ և հաճելի համ: Օգտագործվում է հոգեկան ընկճվածության և թախծի դեպքերում, ինչպես նաև մարսողության կարգավորման, գլխացավերի, հազի, ցավոտ դաշտանի, նյարդային լարվածության, հիպերտոնիկ հիվանդությունների, հեպատիտների ժամանակ: Այս բույսի օգտագործումը հակացուցված է հղիներին: Դեղաբույսը պարունակում է եթերայուղեր, կարոտին, աղանյութեր, վիտամին A,C և այլն:

ԱՆԹԱՌԱՄ ԿՂՄԻՆԴՐԱԲԱԺԱԿ

Helichrysium plintocalix

(անման ծաղիկ, ապրիմ-մեռնիմ, արևոսկի, հարություն ծաղիկ, Կարապետի ծաղիկ)

Նկարագրություն `
Բարձրությունը 15-30սմ, երբեմն նաև մինչև 1 մետրի է հասնում: Տերևները երկարավուն են, ամբողջաեզր: Ծաղկաբույլը կիսագնդաձև, բազմագլուխ զամբյուղ է: Թերթիկները բարակ են, բազմաշարք, դեղին, ոսկեգույն, ծիրանագույն: Ծաղկում է հունիս-հուլիսին: Պտուղը գլանաձև սերմիկ է:
Ընդգրկման տարածքը `աճում է տափաստանային գոտիներում , սարալանջերում, վերին լեռնային գոտու չոր, քարքարոտ լանջերին:

Հավաք՝ Հումք են ծառայում ծաղիկները՝ կարճ ցողուններով: Ծաղիկները հավաքվում են հուլիս-օգոստոս ամիսներին: 1կգ չոր հումք ստանալու համար անհրաժեշտ է 2-2,5 կգ թաց ծաղիկներ:

Օգտակար հատկություններ՝
Օգտագործվում է որպես դեղամիջոց: Ունի լեղամուղ, միզուղիները ախտահանող և մանրէասպան հատկություն: Լավ արդյունք է տալիս լյարդի հիվանդությունների, աթերոսկլերոզի ժամանակ: Նպաստում է խոլեստերինի քանակի իջեցմանը արյան մեջ: Ծաղկազամբյուղները պարունակում են ֆլավոնոիդներ, եթերայուղ, խեժ, օրգանական թթուներ, սպիրտ, ճարպանյութ, կալցիում, երկաթ, մագնեզիում և այլն:

ԱՌՅՈՒԾԱԳԻ

Leonurus

(սրտախոտ, առյուծատունկ, առյուծոտն, սպիտակափառ)

Նկարագրություն ՝ 100-150 սմ բարձրությամբ: Ցողունն ուղիղ է, վերին մասում՝ ճյուղավորվող, խավոտ, քառանիստ: Տերևները հակադիր են, հիմքում՝ սրտաձև, ատամնաեզր, ցողունի ներքևի մասինը՝ թաթաձև մասնատված, վերևինները՝ եռաբաժան կամ եռթիականի: Ծաղկաբույլը հասկանման է, ծաղիկները՝ մանր, վարդագույն: Ծաղկում է հունիս-սեպտեմբերին: Պտուղը քառընկուզիկ է:

Ընդգրկման տարածքը ՝ աճում է դաշտերում, անտառներում, ճամփեզրերում տնամերձ հողամասերում, այգիներում, բանջարանոցներում : Տարածված է նախալեռնային և անտառային գոտիներում. Գեղարքունիքում, Կոտայքում, Լոռիում:

Հավաք՝ Բուժման նպատակով հավաքը անհրաժեշտ է իրականացնել բույսի ծաղկման շրջանում: Օգտագործվում են ներքևի խոշոր տերևները և ծաղկած գագաթները՝ մինչև 30-40 սմ երկարությամբ մատղաշ ճյուղիկների հետ, թոռոմած ծաղիկներով բույսը պիտանի չէ:

Օգտակար հատկություններ՝ Հիմնականում կիրառվում է որպես դեղաբույս: Օգտակար է նեվրոզի հիպերտոնիկ և սրտային հիվանդության բուժման նպատակով: Օգտագործվում է նաև ստամոքսային խանգարումների, շնչուղիների կատառի և շնչարգելության ժամանակ: Բույսը պարունակում է օրգանական, A, E, C վիտամիններ, ֆլավոնոիդներ, եթերայուղ, դաբաղանյութեր, շաքարանյութեր և այլ օգտակար միկրո և մակրոտարրեր:

Matricaria chamomilla L.

(օշոշ, հավածաղիկ, արգանդախոտ, խնծաղեղ, կոկոռճիկ, կուծուռի, լալապնդիկ)

Նկարագրություն `
Բարձրութունը մինչև 30 սմ, միամյա բույս է: Ցողունը բարակ, ուղղաձիգ և ճյուղավոր է: Տերևները՝ կտրտված բարակ և նեղ հատվածներով: Ծաղկային գլխիկները խոշոր չեն: Եզրային ծաղիկները սպիտակ են, իսկ մեջտեղում գտնվողները՝ դեղնավուն: Երիցուկի բոլոր օրգաններն ունեն սուր բուրումնավետ հոտ: Պտուղները գորշ կանաչավուն գույն ունեն և սկսում են հասունանալ հուլիս ամսին:

Ընդգրկման տարածքը `
Տարածված է գրեթե բոլոր մարզերում:

Հավաք՝ Բուժման նպատակով հավաքի ենթակա են ծաղկաբույլերը, որոնք հավաքում են ծաղկման սկզբում: Անհրաժեշտ է հավաքել այն ժամանակ, երբ սպիտակ ծաղիկները զամբյուղիկում հորիզոնական են տեղակայված: Սա թույլ կտա բույսի արտաքին տեսքը պահպանել չորացման ընթացքում: 2 կգ թաց ծաղիկներից ստացվում է 1կգ չոր հումք:

Օգտակար հատկություններ՝
Երիցուկը կարգավորում է նյութափոխանակությունը, իջեցնում է խոլեստերինի մակարդակը, օգտակար է անքնության ու նյարդային լարվածության դեպքում, հանգստացնում է մինչդաշտանային ախտանշանները: Մեծ կիրառություն ունի որպես ախորժաբեր, քրտնաբեր, լեղամուղ միջոց: Ծաղիկները լայնորեն օգտագործվում են որպես հակաորբոքիչ, հակասեպտիկ, հականեխիչ և ցավազրկող միջոց: Պարունակում է այնպիսի միկրոտարրեր, ինչպիսիք են կալիումը, կալցիումը, մագնեզիումը, ցինկը, երկաթը և այլն:

ԻՎԱՆ ԹԵՅ

Chamerion angustifolium

Նկարագրություն՝ 50-150 սմ բարձրությամբ բույս է՝ սողացող արմատային համակարգով, հարթ ուղղաձիգ ցողունով: Տերևները երկարավուն են՝ 4-12սմ երկարությամբ, ամբողջական, ծայրում սրացող: Սերմերը եռանկյունաձև են՝ հստակ ծակոտիներով:

Ընդգրկման տարածքը՝ Աճում է չոր ու լուսավոր անտառներում, մշակաբույսերի մոտ, նաև ջրի մոտ՝ խոնավ հողի վրա: Հաճախ աճում է ազնվամորու մոտ:

Հավաք՝ Որպես հումք ծառայում է բույսի վերգետյա մասը: Իվան թեյը հավաքում են ծաղկման շրջանում, հավաքը սկսվում է հունիսի վերջին և շարունակվում մինչ աշուն: Հարկավոր է բույսը հավաքել մինչ ծաղկի ամբողջական բացվելը: Օգոստոսին բույսի վրա հասունանում են մազմզուկներով պատված սերմեր, որոնք չպետք է խառնվեն հավաքին:

Օգտակար հատկություններ՝ Իվան թեյը ներառում է տարրեր, ինչպիսիք են B վիտամիններ, վիտամին C, երկաթ, պղինձ, կարոտինոիդներ, օրգանական թթուներ, որոնց շնորհիվ խթանում է արյունառաջացման գործընթացը, նվազեցնում նյարդային լարվածությունը, հանգստացնում և բարելավում գիշերային քունը: Հատուկ ադսորբենտ և անտիօքսիդանտ նյութերի պարունակության շնորհիվ մաքրում է մարմինը թունավոր տարրերից և կանխում ուռուցքի առաջացումը:

ՍՐՈՀՈՒՆԴ

Hypericum

(արևքուրիկ , հազարածաղիկ , հայֆարիզոն , հիպերիկոն , դաշտի եզնաածաղիկ, մկան աղիք, մշահամուկ)

Նկարագրություն ՝ Բարձրությունը 15-100սմ: Ցողունը կանգուն է, ողորկ, վերին մասում ճյուղավորված: Տերևները հակադիր են, օվալածև , լուսաթափանց կետավոր գեղձիկներով: Ծաղկում է հունիս-սեպտեմբերին, ծաղիկը՝ դեղին: Սերմերը մանր են, դարչնագույն և փայլուն:

Ընդգրկման տարածքը՝ Աճում է ամենուրեք ժայռաճեղքերում, կիրճերում, մարգագետիններում: Տարածված է Տավուշի, Լոռու,Գեղարքունիքի, Սյունիքի և այլ մարզերում:

Հավաք՝ Բուժման նպատակով հավաքը անհրաժեշտ է իրականացնել բույսի ծաղկման շրջանում՝ մինչև պտղակալելը: Պետք է կտրել մկրատով ՝ առանց ցողունային կոշտ մասերի: 1կգ չոր հումք ստանալու համար հարկավոր է 3կգ թաց հումք:

Օգտակար հատկություններ՝ Սրոհունդը համարվում է հիանալի հանգստացնող միջոց: Այն բավականին արդյունավետ է գործում միգրենի, գլխացավերի, նևրոզի և նևրալգիայի բուժման դեպքում: Դեղաբույսը նաև կարգավորում է մարսողական համակարգի գործունեությունը, շատ ուժեղ լեղամուղ է: Բացի այդ, այն իր հակավիրուսային ու հակաբիոտիկային հատկությունների շնորհիվ շատ օգտակար է հարբուխի, բրոնխիտի ու սինուսիտի բուժման համար:

ԼՈՐԵՆԻ

Tilia

(լորի, թմբի , կակղի, լռնի)

Նկարագրություն ՝ Բարձրությունը՝ մինչև 40 մ: Մոխրագորշագույն կեղևով, սրտաձև հիմքով և սղոցաեզր կամ ամբողջաեզր տերևներով: Ծաղկում է 20 տարեկան հասակից , ծաղիկները դեղնասպիտակավուն են և հոտավետ: Ծառը ցրտադիմացկուն է և կայուն:

Ընդգրկման տարածքը՝տարածված են սաղարթավոր անտառներում՝ բոխու, կաղնու, թխկու, հաճարի և փշատաձև ծառերի հետ և կազմում են երկրի անտառային տարածքի 0,5 %:

Հավաք՝ Բուժման նպատակով հավաքում են ծաղկաբույլերը՝ ծաղկատերևներով, երբ դեռ ոչ բոլոր ծաղիկներն են բացված լինում: Անհրաժեշտ է հավաքել դանակով կամ մկրատով: Հումքը մթերվում է հունիս-օգոստոս ամիսներին և 1կգ չոր հումք ստանալու համար անհրաժեշտ է 5 կգ թարմ ծաղիկներ:

Օգտակար հատկություններ՝ Լորենու ծաղիկների եփուկը կամ ջրաթուրմը օգտագործվում են որպես քրտնամուղ, միզամուղ, հակաբորբոքիչ, ցավը հանգստացնող միջոց: Միզուղիների բորբոքման ժամանակ դեղաբույսի պատրաստուկները ի հայտ են բերում ոչ միայն միզամուղ, այլև հակաբորբոքիչ և միզարձակումը կանոնավորող հատկություն: Որպես մանրէասպան միջոց, ողողումների ձևով դրականորեն է ազդում բերանի խոռոչի բորբոքումների ևանգինայի ժամանակ:

ԿԱՏՎԱԽՈՏ

Valeriána

(կատվի դեղ , մրվան, մրվանտակ, կատվաբմատ, կատվակնճկունճ, ֆու)

Նկարագրություն ՝ Բարձրութունը 0,5-2մ բազմամյա բույս է: Ունի կարճ ու ուղղաձիգ կոճղարմատներ՝ բազմաթիվ հավելյալ արմատիկներով, որոնք ունեն բնորոշ սուր համ և հոտ: Ցողունը գլանաձև է, վերին հատվածում ճյուղավորվող: Լայն ձվաձև տերևներ և սպիտակ կամ բաց վարդագույն մանր ծաղիկներ ունի: Ծաղկում է հունիս-հուլիս ամիսներին: Պտուղը փուփուլիկավոր սերմիկ է, որը հասունանում է հուլիս-օգոստոսին:

Ընդգրկման տարածքը ՝ Տարածված է գրեթե բոլոր մարզերում, նախալեռնային և ստորոտային հատվածներում: Առանձնապես պահանջկոտ չէ հողի նկատմամբ:

Հավաք ՝ Հավաքում են վաղ գարնանը կամ, ավելի նախընտրելի է՝ աշնանը, երբ վերջացած է լինում բույսի վեգետացիան: Հավաքի ենթակա է միայն երկամյա բույսի արմատը, հաջորդ տարվա աճի համար թողնելով դրա կողքից դուրս եկած մատղաշ արմատները: 1 կգ թարմ հումք ստանալու համար անհրաժեշտ է 1,5-2 կգ թարմ արմատ:

Օգտակար հատկություններ ՝ Բուժման նպատակով օգտագործում են բույսի կոճղարմատը և արմատները : Հիմնականում կիրառվում է որպես նյարդային համակարգը հանգստացնող, սրտի որոշ հիվանդությունների դեպքում կազդուրիչ, հիստերիայի, միգրենի բուժման միջոց և այլն: Նաև որպես համեմունք, ավելացնում են աղցաններին, թուրմերին, լիկյորներին և այլն:

ՊԱՏՐԻՆՋ

Melissa

(Մեղվախոտ, թուրինջախոտ, լիմոնային դաղձ, մելիսա)

Նկարագրություն՝ Ցողունը ճյուղավորվող է, քառակող, թավոտ, բարձրությունը՝ մինչև 150 սմ: Տերևները հակադիր են, խոշոր, ձվաձև, աղեղնաեզր կամ սղոցաեզր, կիտրոնի հոտով: Ծաղկաբույլը փոքրաթիվ ծաղիկներով է, որոնք գտնվում են ցողունների վերին և միջին մասի տերևածոցերում: Ծաղիկները սպիտակ կամ վարդագույն են: Ծաղկում է մայիս-հունիսին: Պտուղը հիմքի մասում նեղացած, հարթ, չորս միասերմ կաղին է:

Ընդգրկման տարածք՝Հանդիպում է Տավուշի, Սյունիքի մարզերի ստորին և միջին լեռնային գոտիներում: Աճում է չոր, քարքարոտ վայրերում, անտառի բացատներում:

Հավաք՝ Հումք է ծառայում բույսի վերգետնյա հատվածը ամբողջությամբ: Հավաքը կատարվում է մայիսի վերջին-հունիս ամսին: 1կգ չոր հումք ստանալու համար անհրաժեշտ է հավաքել 3-4 կգ թաց հումք:

Օգտակար հատկություններ՝ Պատրաստուկներն օգտագործվում են ուռուցքների, ֆուրունկուլների, մարսողության խանգարումների, սրտի անբավարարության, թունավորումների ժամանակ: Պարունակում է այնպիսի քիմիական տարրեր և վիտամիններ, ինչպիսք են՝ Ca-կալցիում, Mg-մագնեզիում, Zn-ցինկ, K-կալիում, Fe-երկաթ, Mn-մանգան, վիտամին B,C:

ԱՎԵԼՈՒԿ

Rumex

(թրթնջուկ, շեփ, թոթշիկ, վուլուկ, վիլուկ)

Նկարագրություն ՝ Բարձրությունը մինչև 120 սմ: Ցողունը ուղիղ է, ճյուղավորվող և ակոսավոր: Հասունանալուց հետո դառնում է ծողանման: Տերևները խոշոր են, հերթադիր, գծաձև և նշտարաձև: Ըստ համի՝ ավելուկը լինում է դառը և քաղցր:

Ընդգրկման տարածքը ՝ Տարածված է Հայաստանի գրեթե բոլոր մարզերում: Աճում է հիմնականում խոնավ վայրերում, մարգագետիններում, թփուտներում, անտառեզրերին, լեռնալանջերին, գետափերին և այլն:

Հավաք՝ Իրականացվում է վաղ գարնանը, մինչև բույսի ակտիվ աճի սկիզբը: Հավաքվում են տերևները, ինչպես թարմ, այնպես էլ չոր օգտագործման համար:

Օգտակար հատկություններ՝ Ավելուկի տերևները պարունակում են հանքային աղեր, կաթնաթթու, խնձորաթթու, թրթնջկաթթու), ասկորբինաթթու, կարոտին, վիտամիններ B1, B2, P, K, PP: ՝ Այն պարունակում է նաև մեծ քանակությամբ սպիտակուց, բջջանյութ, օսլա, ֆերմենտներ, եթերային յուղ, այլն: Օգտագործում են ժողովրդական բժշկության մեջ՝ մարսողության խանգարման, դիզենտերիայի և լյարդի հիվանդությունների ժամանակ: Հայտնի է մանրէասպան, հակաբորբոքային, վերքամոքիչ հատկություններով:

ԾՆԵԲԵԿ ԴԵՂԱՏՈՒ

Aspáragus

(ծնեփակ, ծնեփուկ, մալաժոր, հալիոն, սափառնա, մարանձու)



Նկարագրություն ՝ Բարձրութունը 120-150սմ է, բազմամյա բույս է՝ ճյուղավորված ցողունով, մանր թելանման տերևներով և մանր, բաց կանաչավուն կամ դեղնավուն ծաղիկներով, իսկ հասունանալիս՝ կարմիր, գնդաձև գլխիկով: Ծաղկում և պտղակալում է գարնան վերջից մինչև հուլիս ընկած հատվածում: Բազմանում է սածիլների և կոճղարմատի բաժանումներով և սերմերով: Սերմերը սև են և գտնվում են եռաբուն պտղի մեջ:

Ընդգրկման տարածքը՝Տարածված է գրեթե բոլոր մարզերում: Աճում է անտառներում, քարքարոտ լանջերին, ժայռաճեղքերում , մացառների մեջ և այլն:

Հավաքը՝ Բուժման նպատակով հավաքվող արմատը և կոճղարմատը հանում են վաղ գարնանը կամ աշնանը: Բույսի ընձյուղները հիմնականում հավաքում են վաղ գարնանը, երբ ցողունը կոշտացած չէ :

Օգտակար հատկություններ՝ Ծնեբեկը պարունակում է շատ սպիտակուցներ, ածխաջրեր, մեծ քանակությամբ վիտամիններ, կարոտին և հանքային աղեր: Ծնեբեկում պարունակվող նյութերը մաքրում են արյունը, դրականորեն են ազդում լյարդի աշխատանքի վրա: Բույսի թարմ խաշուկը օգտագործում են որպես միզամուղ միջոց՝ սրտի, երիկամների և միզափամփուշտի հիվանդությունների, ինչպես նաև՝ հոդատապերի ժամանակ:

ՍԻՆԴՐԻԿ

Polygonatum Adans

(սնդրիկ, սնդրուկ, կղմծուկ, սամնտրուկ, քրմնցուկ, Սողոմոնի կնիք)

Նկարագրություն ՝ Բարձրութունը՝ 15-45սմ, հաստ կոճղարմատով բազմամյա խոտաբույս է: Ունի լայն նշտարաձև տերևներ և երկսեռ ծաղիկներ: Ծաղկում է մայիս-հունիս ամիսներին: Բազմանում է սերմերով և կոճղարմատով: Պտուղը սև կամ կապտավուն հատապտուղ է՝ 1-9 սերմերով: Պտղակալում է հունիս-օգոստոս ամիսներին, սակայն ոչ ամեն տարի:

Ընդգրկման տարածքը ՝ Հիմնականում լավ է աճում 1500-2200մ բարձրադիր վայրերում, գլխավորապես Տավուշի, Լոռվա, Սյունիքի, Կոտայքի անտառներում:

***Հավաք*՝** Կիրառելի է կոճղարմատը, տերևները և մատղաշ ցողունը: Ապրիլ-մայիս ամիսներին հավաքում են ուտելու նպատակով, տերևները՝ մինչև ծաղկման ընթացքը, իսկ կոճղարմատը՝ աշնանը:

Օգտակար հատկություններ՝
Սինդրիկը օգտագործվում է որպես մեզը և ստամոքսը մաքրող միջոց, ինչպես նաև ռևմատիզմի և բարձր ջերմության դեպքում : Պատրաստված թրջոցները դնում են թարախսապալարների և բորբոքական ուռուցքների վրա:

ԵՂԻՆՋ

Urtica

(բանջար, մրմուռ խոտ, աղինճ, անճիրե, կճան, մրմնջուկ)



Նկարագրություն `
Բարձրությունը կարող է հասնել մինչև 1,5-2 մ-ի: Ցողունը ուղղաձիգ է: Տերևները հակադիր են, սրտաձև, սղոցաեզր, ծաղկաբույլը՝ հուրանաձև: Ամբողջ բույսը ծածկված է կոշտ և այրող գեղձամազիկներով:

Ընդգրկման տարածքը `
Տարածված է ՀՀ բոլոր մարզերում: Աճում է անտառային գոտիներում, գետահովիտներում, տափաստանային, խոնավ վայրերում:

Հավաք՝ Բուժման նպատակով հավաքը անհրաժեշտ է իրականացնել բույսի ծաղկման շրջանում: Սննդի նպատակով հավաքի ենթակա է միայն մատղաշ ցողունը և տերևները, որոնք կարելի է կտրել մկրատով կամ դանակով:

Օգտակար հատկություններ՝
Տերևներում հայտնաբերված են K, C, B խմբերի վիտամիններ, կարոտին, քիմիական տարրերից՝ կալիում, կալցիում, երկաթ, սիլիցիում, քրոմ, պղինձ, մանգան, ալյումին, վանադիում և այլն: Այս նյութերը թույլ են տալիս այն օգտագործել սակավարյունության, մկանային և հոդային ռևմատիզմի, մաշկային էկզեմաների, լյարդի և լեղածորանների, մարսողության խանգարումների, ստամոքսի ցավերի ժամանակ:

ՄՈՇԵՆԻ

Rubus

Նկարագրություն ՝ Բարձրութունը 1-1,5մ փշոտ ցողունով բազմամյա բույս է: Ծաղիկները սպիտակ են: Պտուղը՝ սև, մուգ կարմիր, հյութալի, հասունանում է հուլիս-սեպտեմբեր ժամանակահատվածում:
Ընդգրկման տարածքը ՝Տավուշի, Լոռու, Սյունիքի մարզեր: Աճում է խոնավ անտառներում, գետափերին, ճանապարհների եզրերին և այլն:

Հավաք՝ Բուժման նպատակով հավաքվում են մատղաշ տերևները՝ բույսի ծաղկելուց անմիջապես առաջ: Պտուղները անհրաժեշտ է հավաքել լրիվ հասունանալուց հետո:

Օգտակար հատկություններ՝ Տերևներն ու արմատները ունեն հակաբորբոքային ազդեցություն՝ պակասեցնում են թարախային գործընթացի զարգացումը, իսկ ճյուղերի թուրմը նպաստում է մազերի աճին:
Հատապտուղներում հայտնաբերված են 7,5% շաքար, օրգանական թթուներ, պեկտինային նյութեր, վիտամիններ B1, B2, PP, C, E, կարոտին, ինչպես նաև մեծ քանակությամբ կալիումի, պղնձի և մանգանի աղեր:

Մոշենու պտուղներն ունեն խիստ արտահայտված քրտնամուղ և միզամուղ հատկություն, հանգստացնում է նյարդային համակարգը, նպաստում է ուղեղի աշխատանքին:

ՄԱՍՐԵՆԻ

Rosa

(մասպար, ակռվուկ, վայրի վարդ, փշավարդ, մասրավարդ)

Նկարագրություն ՝ Բարձրությունը սովորաբար մինչև 2-3 մ-ի հասնող թփեր են, կանաչ կամ գորշ դարչնագույն ընձյուղներով, որոնք պատված են պինդ փայտանման փշերով:

Ընդգրկման տարածքը ՝ Տարածված է գրեթե բոլոր մարզերում, հիմնականում 900-2200 մ բարձրություններում:

Հավաքը՝ Պտուղները հավաքում են կարմրած վիճակում՝ օգոստոս-սեպտեմբերին, երբ դեռևս փափկած չեն լինում: Տերևները հավաքում են բույսի ծաղկման ընթացքում:

Օգտակար հատկություններ՝ Պտուղը, ծաղիկները և որոշ չափով էլ կեղևն ու արմատը կիրառվում է որպես դեղամիջոց՝ տարատեսակ վերամշակումներից հետո: Մասուրը մեծ քանակությամբ վիտամին C է պարունակում, որն իր քանակությամբ գերազանցում է նույնիսկ կիտրոնին: Մասուրն ունի նաև հզոր բակտերիասպան հատկանիշներ: Մասուրի թուրմն ունի լեղամուղ և հակաբորբոքային հատկանիշներ, դրական է ազդում մարսողական համակարգի վրա, ունի միզամուղ ազդեցություն:
Մասուրի բաղադրության մեջ մտնող վիտամին P-ն ամրացնում է մազանոթները: Կարոտինը կամ վիտամին A-ն բարձրացնում է օրգանիզմի դիմադրողականությունը: B1 և B2 վիտամինները մասնակցում են արյունաստեղծ օրգանների աշխատանքին: Վիտամին K-ն լավացնում է արյան մակարդելիությունը:

Բացի այդ, մասուրը պարունակում է վիտամիններ B1, B2, K, E, B6, շաքար, պեկտին, կենսական թթուներ, երկաթի բյուրեղներ, ֆոսֆոր, մագնեզիում, կալցիում:

ԱԼՈՃԵՆԻ

Crataegus L

(սզնի, սարի խնձոր, ալոճի, ալուչ, հալոճի)

Նկարագրություն `
Վարդազգիներին պատկանող փշոտ թուփ է: Տերևները պարզ են, կտրտված եզրերով: Ծաղիկները սպիտակ են կամ երբեմն կարմրավուն: Ծաղկում է մայիս-հունիս ամիսներին: Պտուղը 8-10մմ մանր, կարմրաբոսոր հատիկ է, 3-4 սերմերով, որոնք հասունանում են օգոստոսին:

Ընդգրկման տարածքը `Տարածված է գրեթե բոլոր մարզերի անտառային և մերձանտառային վայրերում:

Հավաքը ՝ Ծաղիկները՝ ծաղկաբույլերով, հավաքում են մինչև լրիվ բացվելը, իսկ պտուղները՝ լրիվ հասունանալուց հետո՝ աշնանը: Խորհուրդ չի տրվում հավաքել առավոտյան շաղին կամ անձրևից հետո:

Օգտակար հատկություններ՝ Հիմնականում ծաղիկներն ու հասուն պտուղներն են օգտագործում բուժական նպատակով: Պատրաստվող դեղամիջոցները մեծամասամբ սրտանոթային նշանակության են, ուժեղացնում են սրտամկանի կծկումները, իջեցնում զարկերակային ճնշումը, վերացնում անոթային սպազմը և այլն:

Ալոճը պարունակում է ակտիվ բաղադրիչներ, որոնք հակաօքսիդանտ հատկություն ունեն: Ծաղիկները և պտուղը զգալի յուղեր, ֆրուկտոզա, կալիում, նատրիում, կալցիում, աղեր, ֆոսֆոր և մեխակ են պարունակում: Ալոճի ամենաառողջարար հատկություններից մեկը սրտի կաթվածի հավանականությունը կանխելն է:

ՉԻՉԽԱՆ

Hippophae

(ծովափուշ, ձիափուշ, ձորի փուշ, ափոի)

Նկարագրություն ՝ Բարձրությունը՝ 0,5-3,5 մ, փշատազգիներին պատկանող փշոտ թուփ է: Մատղաշ ընձյուղները արծաթագույն են, որոնք հետագայում դառնում են գորշ շագանակագույն: Ունի նշտարաձև, պարզ և երկար տերևներ: Ծաղիկները մանր են ու դեղին: Ծաղկում է ապրիլ-մայիս ամիսներին: Պտուղները մսալի են , նարնջագույն, երբեմն կարմրավուն, որոնք հասունանում են սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին:

Ընդգրկման տարածքը ՝Սյունիք, Վայոց Ձոր, Սևանի ավազան, ինչպես նաև Աբովյանի և Դիլիջանի տարածաշրջաններում: Աճում է հիմնականում խոնավ տեղերում, ճահճուտներում :

Հավաքը ՝ Պտուղները հավաքում են աշնանը, երբ եղանակը սառչում է ու պտուղները ձեռք են բերում հաճելի թթվահամություն: Տերևները կարելի է հավաքել ամբողջ սեզոնի ընթացում:

Օգտակար հատկություններ՝

Բուժական նպատակներով օգտագործվում են ճյուղերի կեղևը, տերևները, պտուղները, սերմերը: Չիչխանն օգտակար է նյութափոխանակության կարգավորման և արյան շրջանառության համար: Չիչխանի պտուղները կանխարգելում են աթերոսկլերոզը, հիպերտոնիան, վաղաժամ ծերությունը, նպաստում սերոտոնինի ստեղծմանը, որը կարգավորում է նյարդային համակարգի աշխատանքը: Սաթաթթուն թուլացնում է տոքսիկ նյութերի, ռենտգենյան ճառագայթների, ստրեսի ազդեցությունը: Չիչխանը հարուստ է վիտամիններով և օգտակար նյութերով, ինչպիսիք են E,B1,B2,K, P, կարոտինային նյութերը, PP, քոլինը (B4):

ՀՈՆ

Cornus mas

(զողալենի, կոի, ֆոն, հուն, չուն)



Նկարագրություն ՝ Երկարակյաց, 4-8մ բարձրությամբ ծառ է: Տերևները պարզ են, ամբողջական, ծաղիկները՝ մանր, հավաքված հովանոցանման ծառկաբույլում: Պտուղը կորիզավոր է, մանր, կարմիր, հյութալի:

Ընդգրկման տարածքը ՝ Հայաստանում տարածված է Իջևանի, Նոյեմբերյանի, Տավուշի, Ձանգեզուրի անտառներում և Սյունիքի ցածրադիր մասերում:

Հավաքը ՝ Հոնի ծառը ծաղկում է մարտին, իսկ միրգը հասնում է հուլիսից սեպտեմբեր ընկած ամիսներին:

Օգտակար հատկություններ՝ Օգտակար հատկություններով օժտված է ոչ միայն պտուղը, այլև տերևները, կեղևը, ծաղիկը և սերմերը: Կեղևն ու տերևները հակամանրէային հատկություններ ունեն, իսկ սերմերը կարող են բուժել մաշկը և լորձաթաղանթները: Պտուղը լավ բուժամիջոց է ստամոքսաղիքային հիվանդությունների դեմ: Հոնը նաև բուժում է պոդագրան, սակավարյունությունը, վերականգնում է մարդու օրգանիզմի խաթարված նյութափոխանակությունը: Հոնի տերևները պարունակում են 14% տանիդներ: Հեղուկը և տերևները, ինչպես փորձն է ցույց տվել, կարող են ծառայել որպես լեղամուղ և միզամուղ միջոց: Ընդհանուր առմամբ, հոնից պատրաստված բոլոր դեղամիջոցներն օգտակար են շաքարախտի ժամանակ: Այն նվազեցնում է շաքարային ծանրաբեռնվածությունը:

ՎԱՅՐԻ ՏԱՆՁ

Pyrus communis

Նկարագրություն ՝ բարձր ծառ է, հասնում է մինչև 15մ բարձրության: Ծաղկում է ապրիլ-մայիս ամիսներին:

Ընդգրկման տարածքը ՝ Հայաստանում տարածված է Լոռու, Իջևանի, Նոյեմբերյանի, Տավուշի անտառներում և Սյունիքի ցածրադիր մասերում:

Հավաքը՝ Օգտագործում են ինչպես պտուղները, այնպես էլ տերևներն ու երիտասարդ ճյուղերը: Պտուղները հասունանում են օգոստոսի վերջին և սեպտեմբերին:

Օգտակար հատկություններ՝

Պտուղները հարուստ են կենսական նշանակության վիտամիններով և հանքանյութերով: Հեռացնում են հեղուկը օրգանիզմից՝ նպաստելով սրտի և արյան անոթների աշխատանքին և օգնում նվազեցնել արյան ճնշումը: Պտուղները հակաբակտերիալ ազդեցություն են թողնում ստամոքսի և աղիների միկրոֆլորայի վրա և օգնում երիկամների ու միզուղիների բորբոքման ժամանակ: Պեկտինային նյութերի շնորհիվ մաքրում են օրգանիզմը տոքսիկ նյութերից: Վայրի տանձենու ճյուղերը օգտագործվում են ոսկրային համակարգը ճառագայթումից մաքրելու համար:

Բաժին 2

Հարակայուն վայրի հավաք: Կազմակերպումն ու ընթացակարգերը

Այս մոդուլը նպատակ ունի մասնակիցներին ծանոթացնել հարակայուն վայրի հավաքի մեթոդների հետ, տեղեկացնել շրջակա միջավայրի հնարավոր վնասների մասին, որոնք կարող են առաջանալ ոչ ճիշտ հավաքի հետևանքով: Այս մոդուլի շրջանակում մասնակիցները կսովորեն նաև հավաքվող ամեն մի տեսակի համար հավաքի լավագույն ժամանակահատվածները և եղանակային պայմանները:

Ուսուցման արդյունքները.

Այս մոդուլի ավարտից հետո մասնակիցները կկարողանան՝

- իրականացնել վայրի հավաք՝ համաձայն ընդունված չափորոշիչների և առանց վնասելու շրջակա միջավայրը.

- ծանոթանալ տարբեր բույսերի հավաքի համար նախատեսված ժամանակի, մեթոդների և գործիքների ընտրությանը:

Մեթոդները.

Դասընթացի ժամանակ կտրամադրվեն FairWild-ի հայերեն տարբերակները: Դասընթացավարները կարող են լինել Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ագրոէկոլոգիայի և կենսաբազմազանության ամբիոնի դասախոներ, ոլորտի մասնագետներ, դեղաբույսերի և թեյի հավաքով և վերամշակմամբ զբաղվող կազմակերպությունների և հասարակական կառույցների աշխատակիցներ: Հավաքման մեթոդների և ստանդարտների մասին ինֆորմացիան կարող է ամրագրվել դաշտում վայրի հավաքի պրակտիկ իրականացմամբ:

Ժամանակը: 3 ժամ

Հարակայուն վայրի հավաք

Վայրի հավաք նշանակում է բնական աճող բույսերի հավաք:

Բնության կողմից տրված վայրի բույսերի ռեսուրսների օգտագործումը տարածաշրջանի բնակչության համար գնահատվում է որպես եկամտի լուրջ աղբյուր: Ռեսուրսների ճիշտ և խելամիտ կառավարումը հնարավորություն է ընձեռում ապահովել ինչպես բուսատեսակների երկարաժամկետ օգտագործումը, այնպես էլ վայրի հավաքով զբաղվող բնակիչների կայուն եկամուտը: Քանի որ բնության մեջ բուսապաշարներն անսպառ չեն, արժեքավոր վայրի բուսատեսակները պետք է գտնվեն առանձին հսկողության տակ: Բուսական պաշարներին խնայողաբար վերաբերվելը, բնության և վայրի հավաքի օրենքների ճանաչումն ու գիտակցական կիրառումը կօգնեն պահպանել և անսպառ օգտագործել բնական ռեսուրսները: Այսպիսով, շարունակական հավաք իրականացնելու, հետևաբար հավաքողների մշտական եկամուտն ապահովելու առաջին պայմանը հարակայուն հավաքի կազմակերպումն է: *Հարակայուն վայրի հավաք նշանակում է այնպես կազմակերպել և իրականացնել հավաքը, որ բնությունը և շրջակա միջավայրը չվնասվեն:* Այսինքն, հավաքվող բուսատեսակները, ինչպես նաև հարակից այլ բույսերը և կենդանիները չվնազեն, պահպանվեն և գոյատևեն երկար ժամանակ:

Հարակայուն հավաքի ընթացակարգերն ու մեթոդները

Հետևելով հարակայուն հավաքին բնորոշ մեթոդներին՝ հնարավոր կլինի պահպանել բույսերի բազմազանությունը, կանխել դրանց նվազումն ու բնությանը հասցված վնասակար ազդեցությունը: Ճիշտ կազմակերպված հարակայուն վայրի հավաքն առաջին հերթին բխում է բույսեր հավաքողների շահերից, քանի որ բնական ռեսուրսների կորուստը խարխլում է վայրի հավաքով զբաղվողների ապրուստն ու լայնորեն սպառնում տնտեսությունների զարգացմանը:

Ուստի, անհրաժեշտ է հաշվի առնել հարակայուն հավաքին բնորոշ ընդհանուր կանոնակարգերն ու մեթոդները՝ նշված մարտահրավերներն ու խնդիրները բավարարելու համար, մասնավորապես.

- Ինչպես հավաքել բույսերն ու հատապտուղները.
- Որտեղից հավաքել բուսատեսակները:

Վայրի հավաքի պայմաններն ու անհրաժեշտ պարագաները

<u>Ինչպես հավաքել բույսերն ու հատապտուղները</u>

Ստորև ներկայացված պայմանների պահպանումն ու ամենաարդյունավետ փորձի օգտագործումը երաշխավորում է բուսատեսակների անվտանգ պահպանումն ու երկարաժամկետ գոյությունը: Հետևաբար.

1. Պետք է հավաքել բույսի այն մասերը, որոնք օգտագործվում են և պահանջվում են վերջնական սպառողի կամ ընկերության կողմից: Եթե պահանջվում է հավաքել բույսի վերնամասը՝ տերևները, ծաղիկներն ու պտուղները, ապա *ոչ մի դեպքում պետք չէ հավաքել բույսը արմատներով:* Քանի որ բուսատեսակի արմատական կամ ամբողջական հավաքի դեպքում բույսի վերականգնումը այլևս հնարավոր չի լինի: Նման երևույթի շարունակական լինելը կարող է հանգեցնել բույսերի ոչնչացմանը: Բույսերը պետք է հավաքվեն միայն այն ժամանակ, երբ ունեն հնարավոր լավագույն որակն օգտագործման համար: Վնասված բույսերի հավաքը պետք է բոլորովին բացառվի:

2. Հավաքողները՝ նախքան հավաքը սկսելը, պետք է մանրամասնորեն տեղեկանան ընկերության/սպառողի պահանջներին, հաշվի առնելով թե՛ անհրաժեշտ հումքի քանակությունը և թե՛ որակական չափանիշները՝ անցանկալի կորուստներից խուսափելու ու ապրանքի ամբողջական իրացումը խթանելու համար:
3. Պետք է խուսափել գերհավաքից, որը կարող է հանգեցնել բուսատեսակի քանակի նվազեցմանը, ինչպես նաև հետագայում դրա ամբողջովին անհետացմանը:

4. Վայրի բուսատեսակների վերականգնման համար բարենպաստ պայմաններ ապահովելու համար անհրաժեշտ է պարբերաբար փոփոխել այն տարածքային հատվածները, որտեղից հավաքվում են բույսերը: Ամեն անգամ հավաքելով տարածքի տարբեր մասերից՝ հնարավոր կլինի կանխել գերհավաքն ու տվյալ տեղանքում բույսերի վերացման վտանգը:



5. Կախված այն բանից, թե բուսատեսակի որ մասերն են հավաքվում (արմատ, տերև, ծաղիկ, պտուղներ և սերմեր), կարևոր է հետևել ստորև նշված սահմանափակումներին: Բուսատեսակի պահպանման նկատառումներից ելնելով՝ պետք է հաշվի առնել հետևյալ հարաբերակցությունները.

Հավաքվող բուսատեսակների մասերը	**Հավաքի համար թույլատրելի առավելագույն քանակը**
Արմատներ/սոխուկներ	Տեսակի 20%-ը
Տերևներ	Տերևների 30%-ը
Ծաղիկներ	Յուրաքանչյուր բույսի ծաղիկների 70%-ը
Պտուղներ/սերմեր	Պտուղների և սերմերի 70-80%-ը
Բուսատեսակ	Տվյալ տարածքում տվյալ բուսատեսակի 80%-ը

6. Չպետք է հավաքել այն բուսատեսակները, որոնք հեշտությամբ չեն վերականգնվում կամ դանդաղ են աճում և հավաքի ընթացքում կարող են ոչնչանալ:

7. Չպետք է հավաքել անհետացող համարվող տեսակները, որոնք պաշտպանված են օրենքով (Կարմիր գրքում գրանցված – տես Հավելվածը):

8. Չպետք է հավաքել նաև տվյալ տարածքում հանդիպող հազվադեպ

բուսատեսակները:

9. Չհավաքել այն բույսերը, որոնք վայրի չեն (բնականորեն աճած), այլ աճել են մշակվող դաշտերում, այգիներում, ճամփեզրերին:

<u>Որտեղից հավաքել բուսատեսակները</u>

Կախված հավաքի տեղանքից՝ նույն բուսատեսակից ստացված հումքը կարող է զգալիորեն տարբեր լինել: Նման տարբերությունը կարող է պայմանավորված լինել ինչպես բուսատեսակի արտաքին տեսքի, այնպես էլ ներքին բաղադրիչների փոփոխությամբ, որի պատճառ կարող են հանդիսանալ թե՛ աշխարհագրական, թե՛ էկոլոգիական փոփոխությունները: Այդ իսկ պատճառով հավաքը պետք է իրականացնել աղտոտված տարածքներից կամ հնարավոր աղտոտման աղբյուրներից առավելագույն հեռավորության վրա: Աղտոտման վտանգից խուսափելու համար պետք է շրջանցել այնպիսի հողային, օդային կամ ջրային տարածքները, ինչպիսիք են.

1. մարդկային բնակավայրերը կամ գյուղատնտեսական տարածքները,
2. ճանապարհները, մայրուղիները կամ գործարանները,
3. հանքային պոչամբարները, թափոնները և ռադիոակտիվ տարածքները:

<u>Վայրի հավաքի պայմաններն ու պարագաները</u>

Բույսերի հավաքի ժամանակ պատշաճ պայմանների պահպանումն ու ապահովումը որակյալ հումք ստանալու առաջին գրավականն է:

Հայտնի է, որ խոտաբույսերի ու հատապտուղների աճի և զարգացման տարբեր փուլերում կենսաբանական ակտիվ բաղադրիչների քանակությունն ու օգտակարության աստիճանը փոփոխվում են: Ուստի.

1. Օգտակար հատկություններն առավելագույնս պահպանելու համար խոտաբույսերը պետք է հավաքել տվյալ տեսակին համապատասխան ճիշտ ժամանակահատվածում (տե՛ս բաժին 1):
2. Բույսերի ծաղիկները պետք է հավաքել ծաղկման վաղ փուլում, երբ ծաղիկներում օգտակար նյութերի քանակությունն առավելագույնն է, ավելին, այդ ժամանակ ծաղիկներն ավելի կայուն են չորացման հանդեպ, լավ պահպանում են վառ գունավորումը և պահեստավորման ու վերամշակման ժամանակ չեն թափվում:

3. Բույսերն ու հատապտուղները պետք է հավաքել հնարավորինս չոր եղանակային պայմաններում: Բերքի հետագա բորբոսման երևույթները կանխելու համար պետք է խուսափել թաց հողից, ցողից, անձրևից կամ օդի չափազանց բարձր խոնավությունից:
4. Հատապտուղները խորհուրդ է տրվում հավաքել վաղ առավոտյան, երբ օդի ջերմաստիճանը ցածր է, կամ ուշ երեկոյան: Սա կերաշխավորի բերքի պահպանումը մինչ սառնարանային պահեստավորումը:
5. Հատապտուղները պետք է հավաքել անձրևից առնվազն 24-48 ժամ հետո: Հակառակ դեպքում արագանում են բերքում զարգացող բորբոսման և նեխման երևույթները:
6. Գետնին ընկած հատապտուղները պետք է առանձնացնել, քանի որ ավելի զգայուն են բորբոսի հանդեպ: Հետո պետք է լվանալ, չորացնել կամ ենթարկել հետագա վերամշակման:
7. Հատապտուղները պետք է հավաքել հասունության պատշաճ փուլում, հաշվի առնելով այն, որ դրանց ճնշող մեծամասնությունը պահպանման ժամանակահատվածում միևնույնն է չի հասունանա:

8. Ցանկալի է հենց հավաքի ընթացքում իրականացնել նախնական տեսակավորումը՝ ըստ հասունության ու վնասվածքի աստիճանի:

9. Սակայն պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ գերհասունացած հատապտուղներն ու պտուղները հարմար չեն փոխադրման համար: Հետևաբար, կախված իրացման շուկայից, հատապտուղները պետք է լինեն մի փոքր հասունացած: Եթե պտուղները իրացվելու են տեղական մակարդակում, ապա այս կանոնը կիրառելի չէ:

10. Հատապտուղների և մրգերի հավաքը պետք է կատարել այսպես կոչված «շերտերի» մեթոդով, այսինքն, առաջին հերթին հավաքվում են հասուն պտուղները, այնուհետև, 2-3 օր հետո, կախված եղանակի պայմաններից, կատարվում է բերքահավաքի երկրորդ փուլն ու այսպես շարունակ:

11. Բույսերի որակական հատկությունները պահպանելու նպատակով խորհուրդ է տրվում մինչ հավաքի ավարտը հավաքած բույսերը պարկերի/տարաների մեջ տեղավորելու փոխարեն փռել դաշտում:

12. Հավաքած թարմ բույսերի մեխանիկական վնասումը և սեղմումը (պարկերի գերլցում, կույտեր սարքել) պետք է բացառել՝ հետագա չորացման գործընթացում

խոտաբույսերի տերևների սևացումը կանխելու համար:

13. Հավաքած խոտաբույսերն ու հատապտուղները զերծ պահել արևի ուղղակի ճառագայթներից:

14. Հավաքի ժամանակ քաղված բույսերի փնջերը անմիջապես պետք է թափահարել միջատներից կամ կենդանական մնացորդներից ազատվելու համար:

15. Հավաքած բույսերը չպետք է խառնվեն հավաքման տարածքում աճող այլ բուսատեսակների հետ:

16. Հավաքած բույսերը չպետք է ուղղակիորեն շփվեն հողի հետ: Բույսերը պետք է հավաքել և արագ տեղափոխել չոր և մաքուր պայմաններում:

17. Հավաքման ժամանակ օգտագործվող բոլոր տարաները պետք է լինեն սննդի համար նախատեսված, մաքուր և զերծ նախորդ նյութերի թունավորումից (բանանի արկղերի օգտագործումը չի թույլատրվում՝ մնացորդային թունավոր նյութերի առկայության պատճառով):

18. Խորհուրդ է տրվում օգտագործել հավաքով զբաղվող ընկերության տրամադրած պարագաները: Դրանք պետք է լինեն մաքուր, տվյալ բուսատեսակին համապատասխան (թղթե պարկեր բույսերի համար, պլաստիկ փոքր դույլեր, զամբյուղներ հատապտուղների համար):

19. Խոտաբույսերը (տերևներն ու ծաղիկները) պլաստիկ տարաների կամ տոպրակների մեջ տեղադրելը ցանկալի չէ, քանի որ բույսերը կարող են շոգեհարվել:

20. Հատապտուղների հավաքման համար որպես տարա անհրաժեշտ է օգտագործել 2-3 կգ տարողությամբ հյուսված զամբյուղներ, մաղեր, կողովներ, որոնք ներսից ծածկված են շորով: Այսպիսի տարաները տարբերվում են իրենց թեթևությամբ, հարմարավետությամբ և կարևորը՝ ապահովում են լավ օդափոխություն:

21. Տարաները չպետք է թողնել ուղղակիորեն արևի տակ: Տարան կարող է տաքանալ՝ հասնելով ավելի քան 80°C-ի, և հետագա սառեցման ընթացքում տարայի պատերը կպատվեն ջրի կաթիլներով, որն էլ կարագացնի նեխման

երևույթները:

22. Երկու հավաքների միջև ընկած ժամանակահատվածում տարաները և կիրառվելիք բոլոր գործիքները պետք է ախտահանվեն հետագա վարակի ու թունավորման վտանգը նվազեցնելու համար:

23. Երբ տարաները չեն օգտագործվում, դրանք պետք է պահվեն չոր պայմաններում՝ զերծ միջատներից և անհասանելի՝ մկների, կրծողների, անասունների և ընտանի կենդանիների համար:

24. Հավաքման արգելված մեթոդներն են փայտերով բույսերին հարվածելը, բույսերը արմատախիլ անելը, ճյուղեր սղոցելը:

Բաժին 3

Հավաքից հետո բույսերի և հատապտուղների մշակումն ու պահեստավորումը

Այս մոդուլը մանրամասն տեղեկություններ կտրամադրի բույսերի և հատապտուղների հավաքից հետո մշակման և պահպանման վերաբերյալ: Այն ներառում է տեղեկություններ խոտաբույսերի տեսակավորման, մաքրման, չորացման և պահպանման պայմանների ու գործընթացների, փաթեթավորման ճիշտ ընտրության, ինչպես նաև հատապտուղների տեսակավորման, տեղափոխման և պահպանման համար ճիշտ տարայի ընտրության վերաբերյալ: Մոդուլը անդրադառնում է նաև այն մթերքների հետհավաքյա մշակմանը, որոնք նախատեսվում են վերջնական օրգանական արտադրանք ստանալու համար:

Ուսուցման արդյունքները.

Այս մոդուլը ավարտելուց հետո մասնակիցները կկարողանան.

- իրականացնել մաքրման, չորացման և տեսակավորման աշխատանքները,

- իմանալ, թե ինչ տարաներ պետք է օգտագործել յուրաքանչյուր ապրանքի փոխադրման համար, որպեսզի նվազագույնի հասցվեն բերքի կորուստները,

-իմանալ օրգանական արտադրանքի մշակման կանոնները:

Մեթոդները.

Դասընթացի ժամանակ դասախոսները կլինեն վերամշակող ընկերությունների կամ օրգանական արտադրության հավաստագրմամբ զբաղվող կառույցների ներկայացուցիչներ: Ցանկալի է հրավիրել մասնագետների վերամշակող ընկերություններից, որոնք կցուցադրեն իդեալականապես մաքրված կամ չորացված ապրանքներ, ինչպես նաև կկազմակերպեն այցելություններ գործող արտադրամասեր: Կարելի է օգտագործել տեսանյութեր՝ցույց տալու, թե ինչպես պետք է իրականացնել հավաքից հետո մշակումն ու պահեստավորումը:

Պատրաստման ժամանակ՝ 3 ժամ

Հատապտուղների փոխադրումն ու պահպանման պայմանները

Հավաքից հետո բերքի կորուստների և ապրանքային արժեքի նվազման ամենատարածված պատճառները շարունակում են մնալ հատապտուղների ու բույսերի մեխանիկական վնասվածքներն ու անբավարար ջերմաստիճանային պայմանները:

Հավաքից հետո ճիշտ կազմակերպված բեռնափոխադրումը, օպտիմալ ջերմաստիճանի կարգավորումն ու ապահովումը, տեսակավորումը, վնասված հատապտուղների և բույսերի հեռացումը զգալիորեն կնպաստեն ինչպես որակյալ արտադրանքի պահպանմանը, այնպես էլ պահեստավորման կորուստների կրճատմանը:

<u>Հատապտուղների փոխադրումը</u>

Վայրի հատապտուղների ինչպես հավաքը, այնպես էլ բեռնաթափման և փոխադրման աշխատանքները պահանջում են նուրբ վերաբերմունք: Այսպիսով, հատապտուղների պահպանման գործում ամենակարևորը «խնամքն» է.

1. Եթե հատապտուղները հեռավոր տարածություն չեն անցնելու, ապա հատուկ փոխադրամիջոցներ չեն պահանջվում:
2. Փոխադրման դեպքում պտուղների մեխանիկական վնասվածքները կանխելու համար բերքը պետք է տեղափոխել ամուր բեռնարկղերով:
3. Չպետք է ծանրաբեռնել բեռնարկղերն ու տարաները:
4. Փոխադրման ժամանակ հատապտուղներն արկղերի մեջ պետք է շարված լինեն միմյանցից նրբաթիթեղներով առանձնացված, շերտերով:
5. Խորհուրդ է տրվում տարաների հատակին փռել փափուկ շոր:
6. Փոխադրման համար պետք է ընտրել ոչ շատ հասունացած (ոչ այնքան հյութալի), առողջ հատապտուղները:
7. Հատապտուղները տարայից բեռնարկղեր տեղափոխելիս նվազագույնի հասցնել պտուղների թափվելու (անկման) բարձրությունը՝ վերին տարան պահելով հնարավորինս ցածր:
8. Հատապտուղները պետք է փոխադրել բեռնատար մեքենայի բաց բեռնախցիկում:
9. Հատատապտուղների փոխադրման ժամանակ պետք է ծածկել պտղով լի արկղերի միայն վերին շերտը՝ օդի շրջանառությունն ապահովելու համար:
10. Որպես ծածկույթ հաստ կտորի օգտագործումն աղետալի է, քանի որ սահմանափակվում է օդափոխությունն և արագացնում ջերմաստիճանի բարձրացումը:
11. Հավաքված պտուղները տերևներով կամ խոտով ծածկելը չի խրախուսվում, քանի որ դրանք խոչնդոտում են օդի մուտքն ու կարող են մանրէների զարգացման աղբյուր

հանդիսանալ:

Հատապտուղների պահպանումը

Հատապտուղների պահպանման համար անհրաժեշտ պայման է ցածր ջերմաստիճանն ու սառեցումը: Վերջինս պտուղներում դանդաղեցնում է նյութափոխանակությունն ու ջրի գոլորշացումը, նվազեցնում է միկրոօրգանիզմների աճն ու կանխում այնպիսի փոփոխությունները, ինչպիսիք են փտումն ու նեխումը:

1. Ժամանակավոր պահպանման դեպքում հատապտուղները պետք է պահել սառը և լավ օդափոխվող վայրում կամ էլ սառնարանում: 4-6^0 C-ում և օդի 90% հարաբերական խոնավության պայմաններում հնարավոր կլինի հատապտուղները պահպանել մեկ շաբաթ:
2. Վնասված ու բորբոսով վարակված հատապտուղները պետք է հեռացնել, իսկ առողջ հատապտուղները պետք է տեսակավորել ըստ հասունության աստիճանի:
3. Եթե հատապտուղները հասունացած են, բայց վերամշակման հնարավորություն չկա, բերքը պետք է սառեցնել և պահել հետագա ջերմային մշակման համար: Այդ նպատակով հատապտուղները պետք է շարել մեկ շերտով և դնել սառցախցիկում: Այնուհետև սառեցված հատապտուղները պետք է տեղադրել պլաստիկ տարաների կամ տոպրակների մեջ և մինչ օգտագործումը պահել սառցախցիկում:
4. Հնարավորության դեպքում հարկավոր է բերքը չորացնել կամ վերամշակել նախընտրելի եղանակով (պահածոյացում՝ մուրաբայի, օշարակի պատրաստում):

Խոտաբույսերի մշակումն ու պահեստավորումը հավաքից հետո

Խոտաբույսերի մաքրման գործողությունները

Մաքրման գործողություններն անհրաժեշտ է իրականացնել ինչպես հավաքից, այնպես էլ չորացման գործողություններից հետո: Խոտաբույսերի նախնական մշակման նպատակը հավաքից հետո թերությունների վերացումն ու հումքը հետագա գործընթացին նախապատրաստելն է: Հիմնական վերամշակումից ու չորացումից առաջ անհրաժեշտ է խոտաբույսերը զննել ու տեսակավորել: Զննումը կարող է ներառել՝

- պիտանիության ու որակի գնահատում՝ աղտոտվածություն, վարակ, այլ անպիտան բույսեր.
- օտար մարմինների ներկայություն՝ քար, հող, խխունջ, թել, մազ.
- արտաքին տեսքի ապրանքային գնահատում՝ գույն, չափ, վնասվածք, հոտ, հնարավոր համ:

Նախնական մշակման համար հումքը պետք է փռել գործվածքի վրա՝ փոշուց, անձրևից և արևի ուղղակի ճառագայթներից պաշտպանված վայրում: Հումքը պետք է ենթարկվի մանրակրկիտ տեսողական ստուգման: Պետք է հեռացնել բույսի վնասված հատվածները, դեղնած ու ծակծկված տերևները, ծաղկաթերթերը թափված ծաղկագլխիկները, մանր կենդանիներն ու կենդանական մնացորդները, քարերը, հողը և այլն:

Եթե հումքը չորացումից առաջ պատշաճ ձևով չի մաքրվել, ապա մաքրման գործողությունները կարող են շարունակվել նաև չորանումից հետո: Այս փուլում հնարավոր է վերացնել թե՛ նախնական ավելորդությունները, թե՛ չորացման հետևանքով առաջացած այնպիսի թերությունները, ինչպիսիք են գունափոխված կամ բնական գույնը կորցրած բաղադրիչները, կոշտացած, մանրացած ու փշրված բույսերի մասերը, բորբոսով, սնկով ծածկված տերևները և այլն: Կախված սպառողի պահանջից և որակական չափանիշներից՝ հնարավոր է մաքրման ժամանակ պահանջվի ամբողջովին հեռացնել չորացած բույսերի ցողունները՝ պահպանելով միայն տերևներն ու ծաղիկները: Մաքրման աշխատանքները հիմնականում կատարվում են ձեռքով: Բայց առավելագույն բարձր որակ ապահովելու, ինչպես նաև ապրանքի գինը բարձրացնելու համար, որպես մաքրման եղանակ, ողջունելի է նաև մաղման գործընթացը, որի շնորհիվ հնարավոր է չորացված հումքի աղտոտվածության աստիճանը հասցնել նվազագույնի:

Տեսակավորման և մաքրման գործողությունները պետք է իրականացնել լավ օդափոխվող սենյակներում, քանի որ չոր հումքի հետ աշխատանքի ընթացքում ձևավորված փոշին կարող է գրգռել շնչուղիները: Ակնհայտ է, որ նման դեպքում կարելի է օգտվել հատուկ կտորե դիմակներից:

Արդեն մաքրված և վերամշակված բույսերը պետք է պաշտպանված լինեն աղտոտումից, ինչպես նաև միջատներից, կրծողներից, թռչուններից և այլ վնասատուներից:

<u>Խոտաբույսերի չորացման պայմաններն ու եղանակները</u>

Չորացումը համարվում է խոտաբույսերի վերամշակման կարևորագույն փուլը: Պետք է նշել, որ հումքի որակը, հատկապես դրա տեսքն ու ապահով պահպանումը մեծապես կախված է չորացման գործընթացից:

Ուստի, ստորև բերված տեղեկությունը կօգնի նվազեցնել հնարավոր խնդիրների առաջացման հավանականությունն ու բացահայտել որակյալ հումք ստանալու եղանակները:

1. Հավաքված ապրանքը վերամշակման արտադրամաս, տուն կամ գնման կենտրոն տեղափոխվելուց հետո պետք է անհապաղ դատարկել և դուրս բերել փաթեթներից:
2. Առավելագույնս պետք է կրճատել հավաքի և չորացման միջև ընկած ժամանակահատվածը՝ բույսի օգտակար հատկություններն ու ապրանքային որակը պահպանելու նկատառումներով: Չորացումն ուշացնելու դեպքում, որպես թարմ

բույսերում կենսաքիմիական գործընթացների արդյունք, հումքը ստանում է շագանակագույն երանգ և ծածկվում բորբոսով:

3. Բույսերը պետք է չորացնել մաքուր, չոր, լավ օդափոխվող վայրում, հեռու թունաքիմիկատներից և այլ թունավոր նյութերից:
4. Կարևոր է հասնել թարմ բույսերի միաժամանակյա չորացմանը՝ խուսափելու համար սնկերի և բորբոսի առաջացումից:
5. Մանրէների ու սնկերի հետագա զարգացման վտանգը նվազեցնելու համար խոնավության մակարդակը չորացված բույսերում պետք է ինչքան հնարավոր է ցածր լինի (10-13%):
6. Խոտաբույսերի չորացումը պետք է կատարել 30-35^0 C-ում, իսկ հատապտուղներին հատուկ չորացման ջերմաստիճանը 60-70^0 C-ն է:
7. Չորացման գործընթացը համարվում է ավարտված, երբ չորացված ցողունները հեշտությամբ փշրվում են, իսկ տերևները՝ փոշու նման մանրանում:
8. Խոտաբույսերը, տերևներն ու ծաղիկները չպետք է չորացնել արևի ուղիղ ճառագայթների տակ, քանի որ այն ազդում է հումքի կանաչ գույնի վրա, թուլացնում է բնական բույրը, ոչնչացնում է կենսաբանական ակտիվ նյութերը, իսկ եթերային յուղերը ինտենսիվորեն գոլորշանում են, որը թուլացնում է բույսի բուժիչ հատկությունները:
9. Չորացված բույսերը պետք է պահպանվեն վերախոնավացման վտանգից, այսինքն, զերծ մնան տեղումներից և պահվեն այնպիսի վայրում, որտեղ ավելորդ խոնավություն չկա (առաստաղից կաթոց, պատերի բորբոս):
10. Պետք է խուսափել գետնի վրա չորացումից:
11. Թրթուրները, կրծողները, թռչունները և այլ վնասատուները, գյուղատնտեսական ու տնային կենդանիները պետք է հեռացվեն չորացման վայրերից:

<u>Չորացման եղանակները</u>- Գոյություն ունի չորացման երկու եղանակ՝ բնական և արհեստական: Կախված չորացման մեթոդից ու հատկապես ջերմաստիճանից՝ չորացված հումքը կարող է զգալիորեն տարբեր լինել թե՛ արտաքին տեսքով, թե՛ համային հատկանիշներով և թե՛ օգտակարության աստիճանով: Այսպես, օրինակ, ստվերում չորացված բույսերը լավ են պահպանում իրենց բնական գույնը, իսկ չորացման ցածր ջերմաստիճանի դեպքում լավ են պահպանվում կանսաբանական անկայուն նյութերը:

<u>Բնական չորացումը</u> - կատարվում է բացօթյա՝ արևի ուղղակի ճառագայթներից պաշտպանված, կամ էլ ծածկի տակ՝ լավ օդափոխվող տարածքում: Սա չորացման ամենատարածված ու հասարակ ձևն է, քանի որ չի պահանջում սարքավորումների հետ կապված լրացուցիչ ծախսեր, և չորացման պատշաճ

պայմանների պահպանման դեպքում որակյալ հումքի ստացումը երաշխավորվում է:

Բնական չորացումը սովորաբար տևում է մի քանի օր: Արդյունավետ չորացման համար բույսերը պետք է փռել բարակ շերտով՝ ամենաշատը 4 սմ հաստությամբ: Բացօթյա չորացման դեպքում պետք է զգուշանալ անձրևից, ցողից: Հումքի միաժամանակյա չորացումը ապահովելու համար անհրաժեշտ է բույսերը կանոնավոր կերպով շրջել և խառնել (օրական 5-10 անգամ):

Արհեստական չորացումը - հատուկ նշանակության չորանոցներում իրականացվող հարմար գործընթաց է: Այն թույլ է տալիս վերահսկել ջերմաստիճանը ու չորացման տևողությունը և համեմատաբար կարճ ժամանակում ստանալ բարձրորակ հումք: Չորանոցներն օգտագործվում են ինչպես խոտաբույսերի, այնպես էլ մասուրի, ալոճի, հոնի և հյութալի պտուղների չորացման համար: Այս պարագայում անհրաժեշտ պայման է ջերմաստիճանի ճիշտ կարգավորումը: Վերջինս չպետք է գերազանցի 70^0 C-ը, հակառակ դեպքում հումքը կկորցնի իր առողջ քիմիական կազմը և վերջինից կախված օգտակար հատկություններն ու արտաքին տեսքը:

<u>Նախնական փաթեթավորում</u>

Վերամշակված բույսերը պետք է հնարավորինս արագ փաթեթավորել՝ կանխելու համար արտադրանքի որակի վատթարացումը և պաշտպանելու այն պոտենցիալ վնասատուների հարձակումից ու տարատեսակ այլ աղտոտումներից:

1. Վերամշակված խորաբույսերը պետք է պահվեն կամ փաթեթավորված լինեն մաքուր, չոր արկղերում, պարկերում, միաշերտ և երկշերտ թղթե տոպրակներում, կտորե պայուսակներում կամ արտադրողի/սպառողի տրամադրած հատուկ փաթեթներում:
2. Փաթեթավորման համար օգտագործվող նյութերը պետք է լինեն սննդի համար նախատեսված, բարվոք վիճակում և զերծ թունավոր նյութերի մացորդներից:
3. Բազմակի օգտագործման պարկերը, պայուսակները, վերաօգտագործման համար պետք է լավ լվանալ, ախտահանել (ախտահանման կիրառելի միջոց է աղաջուրը) և լավ չորացնել՝ նախորդ աղտոտումից (վարակ, բորբոս, վնասատու միջատի թրթուր, ձու) խուսափելու համար:

5. Փաթեթավորման համար օգտագործվող բոլոր նյութերը պետք է պահել մաքուր և չոր վայրում, հեռու վնասատուների վարակի աղբյուրից և անհասանելի՝ գյուղատնտեսական և տնային կենդանիների համար:
6. Յուրաքանչյուր փաթեթ պետք է պիտակավորվի: Պիտակի վրա հստակորեն պետք է նշել բույսի անունը, մասերը, հավաքման վայրը, հավաքման ամսաթիվը, քանակը, չորացման եղանակն ու որակը հավաստող տեղեկատվությունը:

<u>Պահեստավորում և պահեստային պայմաններ</u>

Հումքի պահպանման և պահեստավորման նպատակը անհրաժեշտության դեպքում պահանջված հումքը սպառողին հասցնելն է՝ պահպանելով վերջինիս օգտակար հատկություններն ու որակական հատկանիշները: Ոչ պատշաճ պահեստավորման դեպքում, նույնիսկ ճիշտ կերպով հավաքված, չորացրած և վերամշակված հումքը կորցնում է իր ապրանքային հատկանիշներն ու դառնում անպիտան:

1. Պահեստը կամ պահեստային սենյակը պետք է լինի չոր: Պահեստի օպտիմալ ջերմաստիճանը պետք է լինի 10-12^0 C, իսկ հարաբերական խոնավությունը ոչ ավելի, քան 60-65%: Հակառակ դեպքում, բարձր ջերմաստիճանն ու խոնավությունը բարենպաստ պայման են հանդիսանում միջատների և մանրէների զարգացման համար:
2. Պահեստային սենյակը (հատկապես, եթե այն տանիքն է) պետք է լինի լավ օդափոխվող, որպեսզի ջերմաստիճանն ու խոնավությունը ճիշտ կառավարվեն:
3. Բացի այդ, բարձր ջերմաստիճանը բացասաբար է անդրադառնում նաև հումքի վրա՝ բույսերում նվազեցնելով օգտակար եթերային յուղերի քանակությունը:
4. Պահեստներում հումքը պետք է դրվի դարակների վրա՝ հատակից ու պատերից հեռու (ըստ՝ ԳOUS-ի ստանդարտի):
5. Հումքը պետք է պարբերաբար զննել և տարին մի քանի անգամ տեղափոխել՝ դնել նոր տեղում:

6. Մինչ սպառողին հանձնելը կամ փաթեթավորման վերջնական փուլը, պետք է իրականացնել պատրաստի հումքի որակի վերահսկման շարունակական միջոցառումներ (ապրանքի պարբերական զննում, միջավայրի բարենպաստ պայմանների ապահովում), որպեսզի հնարավոր լինի վերահսկել և վերացնել անցանկալի երևույթների զարգացումը:
7. Միջատների կամ բորբոսի ազդեցությանը ենթարկված հումքը, կամ էլ գունազրկված ու բուրմունքը կորցրած, մանր փշրված բույսերը, կախված վարակի մասշտաբից, պետք է կամ դեն նետել, կամ էլ ենթարկել վերամշակման:
8. Պետք չէ տարբեր բուսատեսակները կամ տարբեր խմբաքանակները դնել իրար մոտ տարածության վրա: Խառը պահեստավորման պատճառով վարակը մի բուսատեսակից կարող է տեղափոխվել նախկինում չաղտոտված արտադրանքի վրա: Ապրանքի խաչաձև աղտոտման կանխարգելման համար պետք է ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ:

9. Չորացված հումքը տեղափոխելիս պետք է համոզվել, որ այն պաշտպանված է անձրևից ու վերախոնավացման վտանգից:

<u>Բույսերի վնասատուները և դրանց դեմ պայքարի մեթոդները</u>

Խոտաբույսերը պարունակում են շաքար, օսլա և այլ սննդարար նյութեր, որի պատճառով ոչ ճիշտ պահպանման ժամանակ կարող են ենթարկվել այնպիսի վնասատուների ազդեցությանը, ինչպիսիք են մրգային ցեցը, ուտիճը, բզեզը, թրթուրները, կրծողները և այլն:



Բացի այն բանից, որ վնասատուների դեմ պայքարը սննդամթերքի անվտանգության պահանջներից մեկն է, պետք է ի նկատի ունենալ, որ վնասատուները կարող են փչացնել ամբողջ բերքը, հանգեցնել մեծ կորուստների ու սպառնալ սպասվելիք եկամուտին: Վնասատուների դեմ պայքարի համար հարկավոր է ձեռնարկել ինչպես կանխարգելիչ, այնպես էլ պայքարի համապատասխան միջոցառումներ:

Կանխարգելիչ միջոցառումներ-Կանխարգելիչ միջոցառումները ներառում են բույսի պատշաճ չորացումը (չորությունը որոշվում է բույսի լավ փշրվելու հատկությամբ), մաքրության պահպանումը, լավ օդափոխությունը և համապատասխան պայմանների պահպանումը, ինչպիսիք են՝ +12^{0}C ջերմաստիճան և 60-65%-ից ոչ բարձր խոնավություն: Կանխարգելման կարևոր միջոց է համարվում հումքի փաթեթավորումը: Հարկավոր է հումքը տեղավորել լավ փակվող տուփերում, արկղերում, պարկերում և օրական առնվազն մեկ անգամ ստուգել վերջիններիս պարունակությունը: Կանխարգելման պայմաններից է նաև պահպանման տարածքի պարբերական մաքրումն ու ախտահանումը:

<u>Պայքարի միջոցառումները</u> -Վնասատուների դեմ պայքարի համար թույլատրելի են միայն մեխանիկական կամ կենսաբանական պայքարի միջոցները: Որպես մեխանիկական միջոց խրախուսվում է թակարդների օգտագործումը: Միջատների ոչնչացման համար արդյունավետ է ինչպես

կպչուն, կախովի գրավչաթակարդների, որոնք իրենց են ձգում վնասատուներին, այնպես էլ հատուկ լուսային լապտերների օգտագործումը: Անհրաժեշտության դեպքում հարկավոր է իրականացնել նաև հումքի մեխանիկական մաքրման և ջերմային մշակման գործընթացներ: Մեխանիկական մաքրման ձևերից է մաղումը, որի միջոցով կարելի է ազատվել միջատների ձվերից՝ կանխելով դրանց հետագա զարգացումը: Պայքարի հիմնական միջոց է համարվում հումքի ջերմային մշակումը, որն արհրաժեշտ է իրականացնել 50-60 ^{0}C-ում 45 րոպեից մինչև 1 ժամ տևողությամբ:

Ոչ մի դեպքում բույսերի մանրէաբանական մշակման համար չի թույլատրվում թունաքիմիկատների օգտագործումը: Վնասատուների դեմ վարակազերծումը պետք է իրականացնել միայն խիստ անհրաժեշտության դեպքում, և նման մեթոդների ու նյութերի կիրառումը, ինչպես նաև մնացորդային նյութերի թույլատրելի սահմանները պետք է համապատասխանեցված լինեն արտադրող և սպառող երկրների չափորոշիչներին: Բացի այդ, քիմիական նյութերի և իոնացնող ճառագայթների օգտագործման փաստը պետք է անպայման հայտարարագրել:

<u>Մաքրումն ու ախտահանումը</u>

Շատ կարևոր է աշխատանքային մակերեսների պարբերական մաքրումն ու ախտահանումը: Մաքրման համար իդեալական միջոց է խմելու ջուրը, քանի որ ոչ մաքուր ջուրը կարող է ախտածին երևույթների առաջացման պատճառ հանդիսանալ: Մաքրման և ախտահանման համար թույլատրելի են միայն հատուկ քիմիական նյութեր, որոնք կիրառելի են սննդային միջավայրում: Ախտահանումը պետք է իրականացնել միայն մակերեսների նախնական մաքրումից հետո, քանի որ օրգանական աղբը նվազեցնում է ախտահանիչի մանրէազերծման արդյունավետությունը: Այնուհետ ախտահանիչ նյութի մնացորդները պետք է մանրակրկիտ հեռացվեն առատ ջրով: Ախտահանումը առանց նախնական լվացման և հակառակը՝ ուղղակի քիմիական նյութերի վատնում են: Մաքրման և սանիտարական բոլոր նյութերը պետք է լինեն ոչ թունավոր և անվտանգ սննդի համար, ինչպես նաև ոչ ագրեսիվ՝ սարքավորումների և գործիքների, մետաղական և ռետինե մասերի նկատմամբ: Անհրաժեշտ սանիտարական միջոցները պետք է ձեռք բերել միայն լիազորված մատակարարներից՝ խստորեն պահպանելով կիրառման բոլոր կանոնները:

Ընթացիկ մաքրման աշխատանքները պետք է կատարվեն մշակման յուրաքանչյուր գործողությունից հետո: Հատուկ ուշադրություն պետք է դարձնել վերօգտագործվող տարաներին ու տուփերին, որոնք օգտագործվում են աշխատանքի տարբեր փուլերում: Ասենք, հավաքի համար նախատեսված տարան, պարկը կամ տուփը երբեք չպետք է օգտագործել չորացված և վերամշակված հումքի պահպանման համար: Բոլոր աշխատանքները պետք է իրականացնել հուսալի գլխաշորերով, ռետինե ձեռնոցներով, ռետինե կոշիկներով, գոգնոցներով և անհրաժեշտության դեպքում՝ դիմակներով:

Բաժին 4

Շուկայահանումը և շուկայահանման միջոցները

Շուկայահանումը կարևոր քայլ է, որի հաջող կազմակերպումը վայրի հավաքի արժեշղթայի գրավականներից է: Համացանցային որոնման համակարգերը և հնարավոր սպառողներին գտնելու և վերջիններիս հետ կապ հաստատելու կարողությունը թույլ կտա հավաքված մթերքի համար շուկա ապահովել: Մոդուլը ներառում է առցանց գործիքներ, որոնցով հնարավոր կլինի բացահայտել ոլորտում ակտիվ վերամշակողներին, միջնորդներին կամ արտահանողներին. Նման կայքեր ու հարթակներ են՝ Սփյուռ տեղեկատվական համակարգը, list.am կայքը, սոցիալական ցանցերը և այլն: Կներկայացվեն ինտերնետ-մարկետինգային խորհուրդներ, թե ինչպես հավաքով հետաքրքրվող օգտատերերը կարող են օգուտ քաղել սոցիալական ցանցերում գրանցված էջից:

Ուսուցման արդյունքներ .

Մոդուլի ավարտից հետո մասնակիցները կկարողանան.

- Փնտրել և կապ հաստատել իրենց մթերքի հնարավոր սպառողների հետ (վերամշակող գործարաններ, սուպերմարկետներ, արտահանողներ),
- Առցանց հարթակներում վայրի հավաքի վերաբերյալ տարածել հայտարարություններ,
- Ստեղծել և օգտագործել հավաքողների մասնակցությամբ խմբեր Ֆեյսբուք սոցիալական ցանցում:

Մեթոդները

Կիրականացվեն լսարանային դասընթացներ վերամշակող գործարանների կամ հաղորդակցության մասնագետների կողմից, որոնք ունեն ինտերնետ-մարկետինգային հմտություններ: Ցանկալի է կազմակերպել փորձի փոխանակում առցանց շուկայի հայտնաբերման վերաբերյալ՝ վայրի հավաքով զբաղվող այլ խմբերի կամ մատակարարների հետ, ինչպես նաև հանձնարարել շուկայահանման մոդելավորման համար իրական դեպքերի վրա հիմնված ուսումնասիրություններ:

Դասավանդման ժամանակը : 2 ժամ

Շուկայահանման էությունը

Շուկայահանումը հմտություն է, որի նպատակը ամենացանկալի գինը վճարող սպառողների հետ հարաբերություններ ձևավորելն է: Այս գործընթացը այն առանցքային նշանակության փուլերից է, երբ մակերեսային կատարվող աշխատանքը դառնում է նպատակաուղղված և հստակ՝ շահույթը առավելագույնի հասցնող գործունեություն:

Վայրի հավաքի դեպքում սա վերաբերում է այն մակարդակին, երբ խնդիրը օրվա հավաքածը մթերելուց վերաճում է երկարատև առևտրային հարաբերությունների և կանոնավոր վայրի հավաքով զբաղվածության: Ապրանքի համար ավելի բարձ գին ստանալու ակնկալիքը հավաքողներին ստիպում է կապ հաստատել հնարավոր սպառողների և արտադրություն իրականացնողների հետ, որոնք պատրաստ են արդարացնել այդ ակնկալիքները: Ի հայտ է գալիս իրավիճակ, երբ հավաքողը ի վիճակի է լինում կատարել ընտրություն և անկախ լինել տվյալ պահին տեղում հաստատված գնից:

Որպես կանոն արդյունավետ է լինում նախօրոք պայմանավորվածությամբ կատարել հավաքը: Միևնույն ժամանակ շուկայահանման գործընթացը կարող է ուղեկցվել որոշակի գործողություններով, որոնք կփոխեն ապրանքի որակական հատկությունները, այդպիսով մրցակցային դիրք ապահովելով շուկայում:

Հայաստանյան բնակլիմայական պայմաններից ելնելով, կարելի է լինում հավաքել տարբեր մթերքներ, որոնք որոշ դեպքերում քիչ են տարածված կամ ընդհանրապես բացակայում են մեկ այլ շրջանում: Բնականաբար այնտեղ, որտեղ տվյալ մթերքը ավելի քիչ է կամ բացակայում է, բարիքը գնահատվում է շատ ավելի բարձր: Սա նշանակում է, որ հավաքողները, ովքեր ձգտում են ավելի մեծ շահույթ ունենալ և ավելի լրջորեն զբաղվել վայրի հավաքով, ըստ գործունեության ծավալի, պետք է կապ հաստատեն Հայաստանի, տարածաշրջանի կամ մարզի շուկաների սուբյեկտների հետ: Այդ կապի հաստատումը առաջնային անհրաժեշտություն է դառնում:

Շուկայահանման ՏՏ գործիքներ

Ներկայիս զարգացած և անընդհատ զարգացող տեղեկատվական տեխնոլոգիաներն ուղղակիորեն ազդում են կյանքի բոլոր բնագավառների վրա: Ստեղծվել են բազմաթիվ հարթակներ, որտեղ շահագրգիռ մարդիկ աշխարհի տարբեր ծայրերից կարողանում են շփվել միմյանց հետ: Բիզնեսի տեսանկյունից ամենամեծ առավելություններն այն է, որ կրճատվում են միջնորդները , ինչը ձեռնտու է լինում թե արտադրողի և թե սպառողի համար:

Բացառություն չէ նաև վայրի հավաքի ոլորտը: Շուկայահանման գործում մեծ դեր կարող են ունենալ համընդհանուր տեղեկատվական այնպիսի ծառայությունները, ինչպիսին է, օրինակ, SPYUR տեղեկատվական համակարգը համացանցում: (www.spyur.am)



Սա հատկապես օգտակար է, երբ հավաքողը ցանկություն ունի անմիջապես կապ



հաստատել վերամշակողների կամ խոշոր խանութ-սուպերմարկետների հետ:

Մուտք գործելով «Հայաստանի գործարար տեղեկատու» և ընտրելով համապատասխան

հրահանգները, կարելի է գտնել և ստանալ այս կամ այն գործարանի կամառևտրային կազմակերպությաn համառոտ նկարագրությունն ու կապի բոլոր հնարավոր միջոցները:

Մեկ այլ դեպքում որպես արդյունավետ գործիք կարող է ծառայել List.am կայքը, որտեղ տեղադրված հայտարարությունը բազմահազար օգտատերեր հնարավորություն կունենան տեսնել: (https://www.list.am/am/)

Ժամանակակից հասարակությունում դժվար է պատկերացնել կյանքն առանց սոցցանցերի: Ստեղծված մի շարք հարթակները ապահովում են այս կամ այն օգտատիրոջ հետ անմիջապես կապ հաստատելու հնարավորություն: Մեկ այլ նշանակալից հատկություն է խմբերի ձևավորումը, որտեղ հավաքվում են այս կամ այն ընդհանուր թեմայով հետաքրքրված օգտատերերը: Եթե դեռևս գոյություն չունեն վայրի հավաքով զբաղվողների խմբեր, ապա կարելի է նախաձեռնել և ստեղծել նոր խումբ, որում հնարավորինս ներառված լինեն ոլորտով հետաքրքրվող օգտատերեր:

Արդյունավետ է նաև բնագավառի հասարակական կազմակերպությունների և այլ կառույցների հետ համագործակցելը, որոնց հետ կարելի է կապ հաստատել ինչպես վերը նշված գործիքներով, այնպես էլ սոցցանցերում դրանց էջերին հետևելով: Թվարկենք մի քանիսը.

- *Կանաչ արահետ* (Green Lane)– օգնում է ֆերմերներին արտադրելու և վաճառելու բարձրորակ և հատկապես շուկայում մրցունակ գյուղատնտեսական ապրանք: Վայրի հավաքով զբաղվողների համար հատկապես օգտակար կլինի կազմակերպության օգնությունը վաճառակետերի հետ կապ հաստատելու համար: (https://greenlane.am/)

- *Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիա*-2014 թվականին

իրականցված ծրագրով համախմբել են շուրջ 200 կանանց ՀՀ հյուսիսային համայնքներից և ձևավորել թեյերի արտադրամաս: (https://www.facebook.com/LOVETeaArmenia/)

- *Էկոգլոբ* – առաջարկում է վայրի հավաքի գործունեության հավաստագրման և վերահսկման ծառայություններ: Ինչպես նաև կարելի է ծանոթանալ օրգանական արտադրությամբ զբաղվողների ցանկին, որը նույնպես կողմնորոշիչ դեր կունենա, թե ում հետ է հնարավոր համագործակցել: (http://ecoglobe.com/am/)

Իհարկե, վերը նշված միջոցները շուկայահանման ընդամենը մի քանի տարբերակներ են: Վայրի հավաքով ավելի լրջորեն զբաղվելու ընթացքում ձեռք բերված հմտություններն ու ստեղծված կապերը թույլ կտան անընդհատ գտնել շուկայահանման խնդիրների նոր լուծումներ և կատարելագործել դրանք:

Բաժին 5

Առաջնորդության և թիմային աշխատանքի կարևորությունը

Հաճախ վերամշակողները կամ միջնորդները չեն կարողանում յուրաքանչյուր հավաքողի հետ առանձին կապ հաստատել, և ավելի նպատակահարմար է լինում աշխատել խմբերի ղեկավարների հետ, որոնք կծառայեն որպես կապող օղակ և կապահովեն հաղորդակցությունը մատակարարման ռրակի, քանակի և վճարման ժամկետների վերաբերյալ: Ընդլայնված համագործակցության հմտությունները (կարողանալ ավելի մեծ քանակությամբ արտադրանք տրամադրել), ինչպես նաև առաջնորդական և ձեռնարկչական հմտությունների զարգացումը կբարելավեն գործընկերությունը արժեշղթայի դերակատարների միջև: Մոդուլում կներկայացվեն խմբերի և սոցիալական ձեռնարկատիրությունների ստեղծման հաջողված դեպքեր՝ որպես համայնքի զարգացմանը և աշխատատեղերի ավելացմանը նպաստող գործոններ:

Ուսուցման արդյունքներ.

Մոդուլի ավարտից հետո մասնակիցները կկարողանան.

- համագործակցել միմյանց հետ, և հավաքչություն իրականացնող այլոց ընկալել որպես գործընկեր, այլ ոչ մրցակիցներ.
- նախաձեռնել և ստեղծել հավաքողներից բաղկացած սեփական խումբը կամ հիմնել ընկերակցություն.
- Գաղափար ունենալ համայնքի զարգացման հնարավոր մոդելների վերաբերյալ:

Մեթոդները.

Դասավանդող մասնագետների կարելի է ներգրավել ՀԿ-ներից կամ կառավարման դպրոցներից: Ցանկալի է ապահովել փորձի փոխանակում հավաք իրականացնող այլ խմբերի կամ սոցիալական ձեռնարկությունների միջև, ինչպես նաև տրամադրել առցանց նյութեր արդյունավետ համագործակցության համակարգերի վերաբերյալ:

Դասավանդման ժամանակը՝ 1 ժամ

Ինչպես զարգացող շատ երկրներում, այնպես էլ Հայաստանում կանայք կատարում են ամենօրյա գյուղատնտեսական աշխատանքի մեծ մասը: Չնայած կատարվող ահռելի աշխատանքին, կանանց դերը գյուղատնտեսության մեջ հաճախ թերագնահատվում է: Նրանց ձայնը որպես կին ֆերմերների հազվադեպ է լսվում տեղական և միջազգային կարևոր իրադարձությունների ժամանակ: Պատճառներից մեկը կին առաջնորդների պակասն է գյուղատնտեսական տարբեր կառույցներում: Ըստ պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (ՊԳԿ) հետազոտության[1], եթե կին ֆերմերները (զարգացող երկրներում կին ֆերմերները կազմում են աշխատուժի 43%-ը) ունենային այն ռեսուրսները, որոնք հասանելի են տղամարդ ֆերմերներին, զարգացող երկրներից 34-ում գյուղատնտեսական արտադրանքը կավելանար 4%-ով, հարդյունս որի այս երկրներում անապահով պայմաններում ապրող մարդկանց թիվը կարող է կրճատվել 17%-ով (մոտավորապես 150 միլիոն մարդ): Այս առումով, արժեքավոր է կին առաջնորդների դերը գյուղական համայնքներում: Նրանք են առաջնորդում իրենց հետ համագործակցող կանանց խմբերը և կապեր հաստատում վերամշակող կազմակերպությունների և/կամ տեղական ու միջազգային ՀԿ-ների հետ՝ փորձելով դրական փոփոխություն իրականացնել իրենց համայնքներում: Կին առաջնորդները, որոնք ամեն օր աշխատում են իրենց համագյուղացիների հետ, առաջնորդին բնորոշ իրենց վարքագծով կարող են դրական ազդեցություն ունենալ համագյուղացիների մտածելակերպի, աշխատելաոճի և, որ ամենակարևորն է, հասնել համայնքի կարողությունների հարակայունությանը[2]:

Կին առաջնորդների կարևոր հատկանիշներն են.

- Միջանձնային հարաբերություններ վարելու հմտություններ

Սա թիմի մյուս անդամների հետ դրական հարաբերություններ հաստատելու և պահելու ունակությունն է:

- Ինքնակառավարման կարողություն

Սա սահմանված ժամկետում աշխատանքը ճիշտ համադրելու և որակյալ արդյունք ներկայացնելու կարողությունն է:

- Թիմակիցների որոշումների և/կամ աշխատանքի վրա ազդելու ունակություն

Սա թիմակիցների գործողությունների, որոշումների, մտածելակերպի կամ կարծիքների վրա ազդելու ունակությունն է:

- Նպատակների իրականացում

Սա հստակ նպատակներ սահմանելու և թիմային աշխատանքով դրանց հասնելու կարողությունն է՝ անկախ հանգամանքներից և հնարավոր խոչընդոտներից:

[1] UN Women, "The role of women in rural development, food production and poverty eradication" http://www.unwomen.org/en/news/in-focus/rural-women-food-poverty/2013

[2] G. H. Zamani and E. Karami, "Rural leadership and sustainable agriculture: Criteria for recruiting leaders" https://www.researchgate.net/publication/266871782_Rural_leadership_and_sustainable_agriculture_Criteria_for_recruiting_leaders

Վերոնշյալ հմտություններից շատերը կարելի է սովորել և հետագայում կատարելագործել:

Արդյունավետ համագործակցությունը թիմակիցների, արտադրողների և արժեշղթայի մյուս ներկայացուցիչների հետ՝ հաջողության հասնելու կարևոր գործոններից մեկն է: Հաջողակ կին առաջնորդները, որպես կանոն, փորձում են գործակցել նաև հարակից գյուղական համայնքների կանանց հետ: Նրանք չեն մրցակցում մեկը մյուսի հետ, փոխարենը գործակցության հնարավորություններ են փնտրում՝ գիտակցելով, որ ուժեղացնելով հարակից համայնքները, կարող են ուժեղացնել հենց իրենց համայնքը:

Լավ կին առաջնորդները շատ արժեքավոր են գյուղական համայնքների զարգացման համար, ուստի հենց կին առաջնորդների պարտավորությունը պետք է լինի նոր կին առաջնորդներին գտնելը կամ առաջնորդի հատկանիշները երիտասարդ աղջիկների մեջ զարգացնելը:

Առաջնորդի հատկանիշներով կանանց ընտրելիս պետք է ի նկատի ունենալ հետևյալ կարևոր հանգամանքները[3]:

- Արդյոք տվյալ անձը մշտապես փնտրու՞մ է ուղիներ իրավիճակը բարելավելու համար:
- Խնդիրները դիտարկու՞մ է որպես մարտահրավերներ, որոնք պետք է հաղթահարել:
- Պատրա՞ստ է կրել այլ մարդկանց առաջնորդելու պատասխանատվություն հանուն ընդհանուր նպատակի:
- Խրախուսու՞մ է իր թիմակիցներին:
- Նախաձեռնո՞ղ է և պատրա՞ստ է առաջարկել և իրականացնել նոր ծրագրեր:
- Նախկինում ցուցաբերե՞լ է առաջնորդին բնորոշ հատկանիշներ:

Թիմային աշխատանքի կարևորությունը գյուղական համայնքներում

[3] Center for Rural Affairs, “Leadership for Rural Communities” https://www.cfra.org/resources/leaders

Նկարը՝ Chir's Guesthouse

Թիմային աշխատանքը կարևոր նշանակություն ունի նոր գաղափարների հավաքման, ընդհանուր նպատակներին ավելի արդյունավետ կերպով հասնելու և համայնքներում գյուղմթերքի առևտրաշրջանառության բարձրացման համար: Ներհամայնքային և միջհամայնքային գործակցությունը կարող է հանգեցնել մի շարք դրական փոփոխությունների, այդ թվում[4]՝

- Համայնքի տնտեսական զարգացում
- Կյանքի որակի բարելավում
- Համայնքի ճանաչելիության բարելավում
- Բնակչության թվաքանակի աճ

Համայնքում թիմային աշխատանքը կարելի է խրախուսել հետևյալ քայլերով՝

- Համագործակցեք գյուղատնտեսական կոոպերատիվների, ֆերմերային ընկերակցությունների հետ: Մասնակցեք նրանց կազմակերպած հանդիպումներին: Այս հանդիպումների ընթացքում կարող եք հանդիպել մարդկանց, որոնք ձեզ պես ունեն տարբեր գաղափարներ համայնքի զարգացման վերաբերյալ: Սա հնարավորություն է մտքեր և տեղեկատվություն փոխանակելու և համատեղ գաղափարներ մշակելու և իրականացնելու համար:
- Շարունակական հանդիպումներ ունեցեք այլ համայնքների կին ֆերմերների հետ: Նրանք նույնպես կարող են ձեզ հաղորդակից դարձնել թիմային աշխատանքը իրականացնելու բարդ և/կամ արդյունավետ ձևերին: Այդ հանդիպումների ընթացքում իրականացրեք գիտելիքի կամ փորձի փոխանակում: Օրինակ, եթե գիտեք վայրի դեղաբույսերի հավաքը առանց բնությանը վնաս հասցնելու իրականացնելու ձևերը, ձեր գիտելիքներ հաղորդեք նաև մյուսներին:
- Հանդիպումների ժամանակ հնարավորություն տվեք մյուս կին ֆերմերներին արտահայտելու իրենց կարծիքները: Հնարավոր է, որ ոչ բոլոր գաղափարները կարելի է իրականացնել, բայց այս ձևով կխրախուսեք տարբեր համայնքներից կանանց ակտիվ մասնակցությունը հանդիպումներին և գուցե կլինեն գաղափարներ, որոնք կօգնեն ձեզ համայնքային զարգացման ծրագրեր մշակելու հարցում:
- Աջակցեք և մասնակցեք հարակից գյուղական համայքներում տեղի ունեցող փառատոներին, միջոցառումներին: Կանանց խմբով ներկայացրեք ձեր համայնքին հատուկ գյուղատնտեսական մթերքներ կամ ձեռագործ աշխատանքներ:

[4] EBH, "Promoting teamwork among communities" https://ebhengineering.com/2018/01/11/promoting-teamwork-among-communities/

Բաժին 6

Վայրի հավաքի արժեշղթան և սեփական ֆինանսների արդյունավետ կառավարումը

Բույսերի, հատապտուղների և մրգերի հավաքից հետո կատարված այլ աշխատանքները հաճախ հավաքողների համար կարող են մեծ շահույթ ապահովել : Ֆինանսական գրագիտությունը թույլ կտա գնահատել հնարավոր ծախսերը և հաշվարկել յուրաքանչյուր լրացուցիչ աշխատանքի համար ստացված շահույթը (օրինակ՝ մաքրում, չորացում և այլն): Հավաքողները կսովորեն , թե ամեն մի լրացուցիչ աշխատանք ինչպես է ազդում մթերումից ստացվող եկամտի վրա և կկարողանան վերլուծել իրենց հնարավորություններն ու ունակությունները այդ աշխատանքների իրականացման համար:

Ուսուցման արդյունքներ.

Մոդուլի ավարտից հետո մասնակիցները կկարողանան.

- բացահայտել տվյալ մթերքին յուրահատուկ արժեշղթայի բոլոր այն գործողությունները ,որոնք կարող են ավելացնել վերջնական արտադրանքի արժեքը.
- այս կամ այն յուրահատկությունն ունեցող խնդիրների լուծման համար կատարել եկամուտ/ծախս պարզ վերլուծություն:

Մեթոդները.

Դասավանդող մասնագետների կարելի է ներգրավել ՀԿ-ներից կամ կառավարման դպրոցներից: Ցանկալի է ապահովել փորձի փոխանակում հավաք իրականացնող այլ խմբերի կամ սոցիալական ձեռնարկությունների միջև, ինչպես նաև անցկացնել ինտերակտիվ քննարկումներ և հանձնարարել ծախսերի ու եկամուտների վերլուծություններ ներառող հաշվարկներ:

Դասավանդման ժամանակը՝ 2 ժամ

Արժեշղթայի էությունը

Վայրի հավաքով զբաղվողները մեծամասամբ իրենց աշխատանքը դիտարկում են որպես ժամանակավոր և առանձնապես հմտություններ չպահանջող զբաղմունք: Սակայն, ինչպես բոլոր բնագավառներում, այստեղ նույնպես գոյություն ունեն բազմաթիվ նրբություններ և տեխնոլոգիական լուծումներ, որոնք նկատելիորեն կբարելավեն գործունեությունից ստացված օգուտը:

Վերջինս կարող է հանդես գալ հետևյալ դրսևորումներից մեկով կամ մի քանիսով միաժամանակ.

- *Ընդհանուր եկամտի ավելացում*
- *Ավելի քիչ ժամանակատարություն*
- *Ավելի որակով արտադրանք*
- *Երկարաժամկետ համագործակցություն և կայուն բիզնես*

Մինչ սպառողին հասնելը ապրանքը անցնում է որոշակի փուլեր: Այդ փուլերում, ձևափոխվելով կամ ենթարկվելով որոշակի մշակման, դրա գինը սկսում է շեղվել սկզբնական գնից: Այսինքն, երբ կատարվում է որոշակի աշխատանք այդ ապրանքների վրա, գինը ավելանում է, որպեսզի ներառի այդ աշխատանքի արժեքը: Սա հենց արժեշղթայի էությունն է:
Այսպիսով, յուրաքանչյուր արտադրող, վայրի հավաքի դեպքում՝ նաև մթերող, որոշակի լրացուցիչ աշխատանք իրականացնելով, հնարավորություն ունի բարձրացնելու իր ապրանքի գինը: Դա կարող է դրսևորվել նաև տեղափոխություն կազմակերպելով, երբ ապրանքը հասցվում է մեկ այլ շուկա , որտեղ, պահանջարկից կախված, գինն ավելի բարձր է: Օրինակ. հատապտուղ հավաքողն ունի մթերքն իրացնելու հետևյալ տարբերակները՝

1) *Հավաքելուց անմիջապես հետո, առանց որևէ մշակման, տանել և հանձնել ապրանքը մթերողին կամ սպառողին՝ տվյալ պահին համընդհանուր տարածված գնով:*
2) *Մաքրել խոտերից, սորտավորել, որոշ դեպքերում նաև լվանալ, հնարավորության դեպքում տեղափոխություն կատարել մեկ այլ բնակավայր, սառնարանի առկայության դեպքում սառեցնել և այլն:*

Բնականաբար, առանց որևէ մշակման ենթարկվելու մթերքը շատ ավելի ցածր կգնահատվի:

Ընդհանրացնելով կարելի է ասել, որ մի դեպքում ստացվում է քիչ ծախսերով, քիչ ժամանակատարությամբ, բայց ցածր գներով ապրանք, մյուս դեպքում ՝ աշխատատար և ժամանակատար, բայց բարձր արժեք ունեցող ապրանք:

Այստեղ շատ կարևոր է հաշվարկել և հասկանալ, թե որ տարբերակը կլինի հավաքողի համար ամենանպատակահարմարը: Պետք է հաշվի առնել կատարվող ծախսերի, ծախսվող ժամանակի և հարդյունս դրանց՝ ավելացված արժեքի այն օպտիմալ հարաբերակցությունը, որը կհանգեցնի ավելի մեծ բավարարվածության: Երբեմն այս հաշվարկի միջոցով գուցեև պարզվի, որ ձեռնտու է միայն այս կամ այն արժեք ավելացնող գործողությունը:

Օրինակ ՝

Հավաք իրականացնողները, դաշտերից կամ անտառներից վերադառնալով, վաճառում են իրենց հավաքած մոշը տարածքում եղած միջին օղակ հանդիսացող մթերողներին, որոնք հավաքում են մեծ քանակությամբ և վերավաճառում, կամ սպառողներին՝ տվյալ պահին շուկայում ձևավորված գներով: Այս դեպքում ժամանակային առումով մթերքը անմիջապես է մթերվում, և փաստացիորեն չի կատարվում ոչ մի հավելյալ գործողություն, որը կավելացնի ապրանքի գինը: Ընդ որում, շատ հաճախ հավաքողը չի կարողանում որոշիչ դեր ունենալ գնագոյացման մեջ: Նախապես չունենալով որևէ սպառողի հետ պայմանավորվածություն՝ հատապտուղների պահպանման դժվարությունից ելնելով, ստիպված է լինում ապրանքը վաճառել սպառողի թելադրած գնով:

Ենթադրենք անտառից հավաքված մոշի մեկ կիլոգրամը վաճառվում է 400 դրամով: Բնական լավ պայմաններում, միջինում 5 կգ հատապտուղ հավաքողը ունենում է մոտ 2000 դրամ շահույթ՝ մոտ 5 ժամ օրական աշխատանքի պայմաններում: Դուրս է գալիս, որ տվյալ մարդը սեզոնի ընթացքում, որը տևում է մոտ 2 ամիս, օրվա մեջ 5 ժամ ծախսելով, ունենում է 120.000 դրամ եկամուտ: Այս տարբերակի առավելություններից է այն , որ հավաքողն ինքն է որոշում, թե երբ,որտեղից, ինչ որակի, ինչ քանակի մթերք հավաքի և ում վրա վաճառի: Կարիք չկա երկարաժամկետ հաշվարկների, քանի որ խնդիրը միայն տվյալ պահին ունեցած ապրանքի իրացումն է: Որպես գլխավոր թերություն կարելի է նշել այն,որ փչացող մթերքի պայմաններում հավաքողը ընդունում է սպառողի թելադրած գինը:

Հիմա պատկերացրեք , որ մի քանի հավաքողներ որոշում են համագործակցել միմյանց հետ: Կազմավորվում է, ենթադրենք, 10 վստահելի մադկանցից բաղկացած խումբ: Սեզոնի ընթացքում վարձում են մեքենա ապրանքը տեղափոխելու համար: Այնուհետև փորձում են կապ հաստատել խոշոր սպառողների հետ, ինչպիսիք են վերամշակող ձեռնարկությունները, խոշոր վաճառակետերը, անհատները և այլն: Պետք է նկատել, որ ժամանակակից զարգացած տեղեկատվական տեխնոլոգիաների պայմաններում բավականին դյուրին է գործարարների և սպառողների միջև անմիջական կապ

հաստատելը: Այսպիսով, կապ է հաստատվում որևէ վերամշակողի, գործարանատիրոջ կամ այլ սպառողի հետ և, խմբի աջակցության պայմաններում, կնքվում է պայմանագիր ամենաօպտիմալ պայմաններով և մթերման գինը սահմանվում է, ենթադրենք, 700 դրամ :

Ստացվում է հետևյալ պատկերը՝

1. Այն դեպքում երբ հավաքողները գործում են առանձին-առանձին.

- Հավելյալ ծախսեր չեն լինում
- Ենթարկվում են ստեղծված շուկայի պայմաններին և գնին
- Շահույթը օրվա հաշվարկով կազմում է 2000 դրամ

2. Մթերողների համագործակցության պայմաններում.

- Ի հայտ է գալիս լրացուցիչ մեքենայի ծախս (վարորդի և վառելիքի վճարները): Սա միջին հաշվարկներով կկազմի մոտ 10.000 դրամ:
- Ընդհանուր եկամուտը կազմում է 35.000 դրամ (10 մարդ 5-ական կգ՝ 700 դրամ/կգ-ով):
  և տրանսպորտի ծախսը հանելուց հետո, անհատական շահույթը կազմում է 2500 դրամ՝ օրվա կտրվածքով (ընդհանուր 35.000ից 10.000 տրանսպորտի ծախսը հանած, և բաժանած 10 մասի):
- Մթերման հետ կապված խնդիրներ ունենալու ռիսկերը նվազում են, քանի որ սպառողի հետ կնքվել է հստակ պայմաններով պայմանագիր:

ՏԱՐԲԵՐԱԿ 1	
Հավաքող	1
Օրվա հավաքած մթերքը	5կգ
Վաճառքի գինը	400 դրամ
Հավելյալ ծախսեր	0
Ընդհանուր սեզոնային շահույթ (եկամուտ-ծախսեր)x 2 ամիս	120 000 դրամ
Անհատական շահույթը մեկ օրվա կտրվածքով	2000դրամ

ՏԱՐԲԵՐԱԿ 2	
Հավաքող	10
Օրվա հավաքած մթերքը	50կգ
Վաճառքի գինը	700 դրամ
Հավելյալ ծախսեր	10 000 դրամ/օր տրանսպորտ
Ընդհանուր սեզոնային շահույթ (եկամուտ-ծախսեր)x 2 ամիս	1.500.000դրամ
Անհատական շահույթը մեկ օրվա կտրվածքով	2500դրամ

Այս մոտավոր հաշվարկներից երևում է, որ համագործակցության շնորհիվ անհատական օգուտը ավելանում է մոտ 25 %-ով: Սակայն համագործակցությունը ենթադրում է ընդհանուր շահ ունեցող մարդկանց պարտաճանաչություն և փոխադարձ հարգանք: Որոշակի խնդիրներ առաջանալու դեպքում պատրաստ պետք է լինել կրելու սպառման և մթերման հետ կապված բոլոր ռիսկերը, բարեխղճորեն պահպանել թիմում առողջ հարաբերությունները, հարկ եղած դեպքում գնալ զիջումների և այլն:

Իհարկե, համագործակցությունը այն բազմաթիվ լուծումներից մեկն է, որը կարող է նպաստել հավաքողների եկամտի աճին: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ տեղի և ժամանակի տարբեր պայմաններում մոշը կարող է գնահատվել մինչև 1200 դրամ: Սա նշանակում է, որ հավաքողների համար գրեթե միշտ հնարավորություն կա որոշակի ջանքեր գործադրելով և ծախսեր կատարելով իրենց մթերքի դիմաց ավելի բարձր գին ստանալ:

Գնագոյացման մեջ որոշիչ դեր կարող է ունենալ՝

- Սորտավորումը – Երբ մթերքի քանակը կրճատվում է, բայց որակապես այն ավելի մրցունակ է դառնում:
- Տեղափոխումը – Տեղափոխվում է մեկ այլ վայր, որտեղ սպառողը պատրաստ է շատ ավելի բարձր գին վճարել:
- Գործնական կապերի հատատումը – Հաճախ կարելի է գալ այնպիսի համաձայնության, երբ սպառողն ինքն է կազմակերպում մթերքի տեղափոխությունը, որը խնայում է մթերողի ժամանակը և գումարը:
- Սառեցումը – Մթերքը սառեցվում է, հետագայում դրա համար ավելի բարձր գին ստանալու նպատակով:
- Արտադրության կազմակերպում –Արտադրական միավորը կառուցվում է հավաքի վայրի հարևանությամբ:

Սրանք բոլորն էլ, քիչ թե շատ, պահանջում են որոշակի ծախսեր: Սեփական միջոցների բացակայության պայմաններում անհրաժեշտ է ուսումնասիրել և կապ հաստատել բնագավառում ներդրումներ կատարող կազմակերպությունների և անհատների հետ: Գոյություն ունեն բազմաթիվ տեղական և միջազգային կառույցներ, որոնք առաջարկում են վարկեր, տարբեր ֆինանսական օգնություններ, խորհրդատվական ծառայություններ և այլն:

Որոշակիորեն համանման, բայց փոքր-ինչ առանձնահատուկ տեխնոլոգիական լուծումներ պահանջող կառուցվածք ունի նաև բույսերի արժեշղթան: Այժմ որևէ հավաքվող բույսի օրինակով ցույց տանք արժեշղթայի ձևավորումը և հնարավոր լուծումները՝ ավելի արդյունավետ գործունեության համար:

Օրինակ՝

Ենթադրենք, ինչ-որ բնակավայրում կամ հարակից շրջաններում ուրցը տարածված է: Սեզոնի սկսվելուն պես մարդիկ, շահույթ ստանալու նպատակով, սկսում են զբաղվել ուրցի հավաքով: Երբեմն հանդիպում են հավաքողներ, որոնք նախընտրում են հավաքել արագ և առանց ուշադրություն դարձնելու վայրի հավաքի կանոններին: Թեպետ որոշակի ժամանակում մեծ քանակությամբ բույս է հավաքվում և քիչ ժամանակ ծախսվում, հավաքածը այդ վիճակում սպառողին հասցնելու դեպքում այն կունենա բավականին ցածր գին: Որպես արդյունք, անկանոն հավաքը ոչ միայն վնասում է բնությանն ու շրջակա միջավայրին, այլև տնտեսապես ձեռնտու չէ:

Դիտարկենք դեպք, որտեղ հավաքված բույսը կշռում է մոտ 10 կգ:

Այս դեպքում առկա են հետևյալ տարբերակները.

- Վաճառել թաց վիճակում՝ առանց որևէ մշակման - 500 դր
  (10կգ –ի դեպքում՝ 5000 դրամ շահույթ):

- Մանրակրկիտ մաքրել արմատային և չորացած մասերից, պահպանելով բույսի և տերևների ամբողջականությունը: Այնուհետև վաճառել 1900 դրամով *(բույսի քաշը մոտ 60 % նվազում է: Մոտ 4 կգ-ի համար շահույթը կլինի 7600 դրամ):*

- Որոշ ժամանակ սեփական պահեստներում չորացնել: Այս ընթացքում նույնպես անհրաժեշտ է պահպանել բույսի և հատկապես տերևների ամբողջականությունը: Այնուհետև վաճառել 6000 դրամով*(չարացնելիս քաշը նվազում է ևս 60 %-ով, մոտ 1,6 կգ չոր ուրցը կգնահատվի 9600 դրամ)*:

Ուրցի հավաք

	ՔԱՇ (կգ)	ԳԻՆ	ՇԱՀՈՒՅԹ
չմշակված, թաց	10	500	5000
մշակված, թաց	4	1900	7600
մշակված, չոր	1.6	6000	9600

Այսպիսով, ունենում ենք մի պատկեր, երբ շատ ավելի ձեռնտու է ապրանքի մթերումը որոշ
ժամանակով հետաձգել, դրա վրա կատարել որոշակի աշխատանք և ստանալ գրեթե
կրկնակի շատ օգուտ:

Արժեշղթայի ուսումնասիրությունը շատ հաճախ շահադրդում է մարդկանց ընդլայնել իրենց գործունեությունը, կազմակերպել ավելի շատ քանակի կամ որակապես ավելի լավ ապրանք, ստեղծել գործարար հարաբերություններ, կատարել հավելյալ աշխատանքներ և հարդյունս մեծացնել ստացվող շահույթը: Սեփական միջոցների բացակայության պայմաններում անհրաժեշտ ներդրումային գումար ձեռք բերելու տարածված տարբերակներից մեկը վարկ վերցնելն է:

Ի՞նչ է վարկը

Վարկը իրենից ներկայացնում է պայմանավորվածություն վարկառուի և վարկ տրամադրողի միջև: Վարկատու կազմակերպությունները Հայաստանի Հանրապետությունում գործող բանկերն են, տարատեսակ վարկային կազմակերպություններն ու գրավատները: Այս կառույցները տրամադրում են գումար, ապրանք կամ ծառայություն, որի համար վարկառուն պարտավորվում է վճարել հետագայում՝ պայմանագրի կետերին համապատասխան:

Վարկերը կարելի է դասակարգել ըստ մի քանի չափանիշների:

1. ***Ըստ ժամկետի***
   - *Կարճաժամկետ* - մինչև 1 տարի.
   - *Միջնաժամկետ* - 1-3 տարի.
   - *Երկարաժամկետ* - 3 տարի և ավելի:

   Անհրաժեշտ է վարկի ժամկետայնությունը հաշվարկել այնպես, որ համապատասխանի ձեռք բերված բարիքին: Երկար տևողությամբ վարկերի ամսական վճարները ցածր են, սակայն, տևողության երկարությամբ պայմանավորված, մեծ կլինի մարվող ընդհանուր գումարը:

2. ***Ըստ նպատակի***
   - *Սպառողական վարկեր*- Ֆիզիկական անձանց տրամադրվող վարկ՝ ապրանքների ձեռք բերման կամ այլ ծախսերի մարման համար: Սպառողական են համարվում նաև մինչև 2 մլն դրամի գյուղատնտեսական վարկերը:
   - *Հիփոթեքային վարկ* – տրամադրվում է անշարժ գույքի համար՝ նույն այդ գույքի գրավադրման պայմանով: Տրամադրման ժամկետը կազմում է միջինում 15 տարի:

- *Գյուղատնտեսական վարկ* – տրամադրվում է մարդկանց և կազմակերպություններին, ովքեր զբաղվում են գյուղատնտեսական արտադրությամբ կամ հումքի վերամշակմամբ:
- *Բիզնես վարկ*- տրամադրվում է ֆիզիկական և իրավաբանական անձանց՝ բիզնեսի իրականացման նպատակով: Կարող են լինել անձինք, որոնք զբաղվում են ձեռնարկչությամբ, առևտրով, կամ սպասարկման ծառայությունների մատուցամբ՝ բիզնեսն ընդլայնելու:
- *Լոմբարդային վարկ* – ֆիզիկական անձանց տրամադրվող սպառողական վարկ է, որի գլխավոր սկզբունքը գարավադրությունն է (ոսկի, գույք, դրամական միջոցներ և այլն):

3. ***Ըստ արժույթի***
   - *Դրամային* - ՀՀ ազգային փողով՝ դրամով:
   - *Արտարժութային* – Այլ երկրների արժույթներով:

Վարկային պայմանագրեր

Վարկ վերցնելիս նածնառաջ պետք է հաշվի առնել եկամուտ-ծախս հարաբերակցությունը. արդյոք ձեռք բերվող վարկը համարժե՞ք է այն նպատակին, ինչի համար նախատեսվում է ծախսել այն: Բոլոր տարբերությունները հաշվի առնելով, անհրաժեշտ է ընտրել հետևյալ բաղադրիչների ամենանպատակահարմար փունջը.

1. Արժույթը, որով տրամադրվելու է վարկը.
2. Վարկի ժամկետայնությունը.
3. Կանխիկ կամ անկանխիկ ձևը.
4. Տոկոսադրույքի չափը.
5. Գրավի և գրավադրման հետ կապված այլ հարցեր.
6. Տույժերի և տուգանքների պայմաններ:

Բոլոր կազմակերպություններում գոյություն ունեն ընդհանրական թերթիկներ, որոնք տալիս են ամփոփ տեղեկատվություն իրենց կողմից տրամադրվող վարկի նշված պայմանների մասին: Այս թերթիկներն, ինչպես նաև բանկերի և վարկային կառույցների կայքերը կարող են տրամադրել բավականաչափ տեղեկություններ եղած առաջարկները համեմատելու համար: Գոյություն ունի նաև ԿԲ ֆինանսական տեղեկատու (www.fininfo.am), որը նույնպես կօգնի համեմատել տարբեր ֆինանսական կառույցների առաջարկները:

*Վարկ տրամադրող յուրաքանչյուր կազմակերպության հետ համաձայնեցված հարաբերություններն արտահայտվում են **պայմանագրի** միջոցով: Մինչ պայմանագրի կնքումը վարկատու կազմակերպությունները պարտավոր են վարկ վերցնողին տրամադրել իր նախընտրած պայմաններով վարկի անհատական թերթիկը: Տրամադրելուց հետո տասնօրյա ժամանակ է տրվում վերջնական որոշում կայացնելու համար: Իսկ կնքելուց հետո 7 օր՝ հրաժարվելու հնարավորության համար: Այդ իսկ պատճառով պայմանագիրը ստորագրելուց առաջ պարզապես անհրաժեշտ է՝*

- Ստուգել վարկի նպատակահարմարությունը անձնական եկամուտների պայմաններում: Ամենաօպտիմալ տարբերակը կարող է լինել այն դեպքը, երբ վարկի ամսական մարման ծախսերը լինեն անձնական եկամտի 30-60%-ը:
- Ուշադրությամբ ուսումնասիրել վարկի մարման ժամանակացույցը:
- Ուշադրություն դարձնել վարկի տոկոսադրույքին: Վերջինս ունի 2 դրսևորում՝ անվանական, որն առաջարկվում է վարկատուի կողմից, կարող է լինել ինչպես ամրագրված, այնպես էլ «լողացող» կամ փոփոխական:

  Փաստացի-այն տոկոսադրույքը, որը կլիներ, եթե դրա մեջ ներառվեին նաև վարկի տրամադրման և սպասարկման վճարները: Նաև հաշվարկվում է վարկի վճարման հաճախականությունը:

  Ընդ որում հիշե՛ք, բոլոր վարկային կազմակերպությունները պարտավոր են պայմանագրերում նշել փաստացի տոկոսադրույքի չափը:

Ներկայումս գոյություն ունեն համակարգչային գործիքներ որոնք շատ արագ կատարում են հաշվարկներ: Բավական է միայն համապատասխան վանդակներում գրել վարկի տվյալներն ու պարամետրերը (https://www.abcfinance.am/):

- Ստուգել, արդյոք գոյություն ունե՞ն այլ վճարներ, որոնք հաշվարկված չեն փաստացի վարկի մեջ:
- Ուշադրությամբ կարդացեք և հասկանցեք գրավադրման պայմանները:
- Սահմանված դեպքերում վարկատուի կողմից նախատեսված տույժերն ու տուգանքները:
- Հստակեցրեք վարկը վաղաժամկետ մարելու մեթոդները:

Գոյություն ունեն նաև օժանդակ փաստաթղթեր, որոնք պահանջելու դեպքում ֆինանսական կառույցները պարտավոր են տրամադրել վարկառուին: Դրանց մեջ նշվում են ոչ պակաս

Ֆինանսական համակարգի հաշտարար

Կառույց է, որի նպատակն է կարգավորել ֆինանսական հարաբերությունները կողմերի միջև: Ծառայությունն անվճար է: Ծագած խնդիրները կարող են լուծվել նաև դատարանի միջոցով, որից հետո, սակայն, ֆինանսական համակարգի հաշտարարին դիմել չեք կարող:

կարևոր պայմաններ, որոնք հնարավոր է նշված չլինեն պայմանագրում: Օրինակ՝ բանկի սակագները, պայմանագրի փոփոխման դեպքերը և այլն:

Ընդհանրապես, ֆինանսական կառույցների հետ հարաբերություններում շատ կարևոր դերակատարում ունի նաև վարկային պատմությունը: Մարումները ուշացնելու կամ պայմանագրում նշված այլ պայմանները խախտելու դեպքում, ձևավորում է «վատ» վարկային պատմություն, որը կարող է խոչընդոտել ֆինանսական կառույցների հետ հետագա համագործակցությանը:

Հիշե՛ք. ***Իրավունքների իմացությունը կանխարգելում է դրանց ոտնահարումը: Յուրաքանչյուր կառույցի հետ համաձայնության գալուց առաջ կարդացեք, ուսումնասիրեք և ամբողջությամբ փորձեք հասկանալ ու ճշտել բոլոր պայմանները: Իմացե՛ք ձեր իրավունքները, և պարտականությունների լիարժեք կատարման պայմաններում կխուսափեք խնդիրներից:***

Հավելված

Կարմիր գրքում գրանցված և հավաքի համար արգելված բույսերը

Գրանցված է Կարմիր գրքում:

Պապլոր փայլունը -հազվագյուտ տեսակ է, հանդիպում է Տավուշիմարզի մարգագետիններում, անտառի բացատներում: Ցողունը մերկ է, բարձրությունը՝ մինչև 40 սմ: Տերևները կաշեկերպ են, արմատամերձ, գծաձև: Ծաղկաբույլը ողկույզ է, ծաղիկները՝ կապույտ, մանուշակագույն կամ դեղնականաչ: Ծաղկում է մարտ-հունիսին: Պտուղը եռանիստ տուփիկ է: Սերմերը գնդաձև են, սև:

Գրանցված է Կարմիր գրքում:

Կարապածաղիկ- Աճում է ճահճուտներում, լճակների, դանդաղահոս գետերի ափերին: Ցողունը մերկ է, կլորավուն, բարձրությունը՝ մինչև 100 սմ: Տերևները գծաձև են, առաջացնում են արմատամերձ վարդակ, ներքևի մասում՝ եռանիստ, ծաղիկները՝ խոշոր, երկսեռ, բազմաթիվ, սպիտակ-վարդագույն: Ծաղկում է հունիս-օգոստոսին:

Գրանցված է Կարմիր գրքում:

Շուշան-ՀՀ-ում՝ 2 տեսակ՝ շուշան Շովիցի և շուշան հայկականն:

Տարածված է Կոտայքի, Լոռու, Տավուշի, մարզերի անտառային և ենթալպյան գոտիներում: Սոխուկը՝ թեփուկավոր է: Ցողունը ճյուղավորվող է, կանգուն, տերևապատ, բարձրությունը՝ 100-110 սմ: Տերևները նշտարաձև են: Ծաղիկները՝ խոշոր, դեղին՝ շագանակագույն բծերով: Ծաղկում է հունիս-հուլիսին: Պտուղը բազմասերմ տուփիկ է:

Գրանցված է Կարմիր գրքում:

Մենախոտ-Տարածված է Արմավիրի, Շիրակի, Տավուշի, Վայոց ձորի, Սյունիքի մարզերում: Աճում է չոր, քարքարոտ, կավոտ, հաճախ՝ նաև գիպսակիր լանջերին:Ցողունը քառանիստ է, բարձրություն՝ 40-100 սմ: Տերևները թավոտ են, ամբողջական կամ փետրաձև կտրտված: Ծաղկաբույլը հասկանման է, ծաղիկները՝ կեղծ տերևանութներում, սպիտակ, դեղնավուն կամ նուրբ վարդագույն: Ծաղկում է հունիս-հուլիսին: Պտուղն ընկուզանման է, միասերմ, վերևում՝ հարթ մազափնջով:

Գրանցված է Կարմիր գրքում:

Ալպիական մանուշակ- Հանդիպում է միայն Տավուշի մարզի ստորին լեռնային գոտում: Աճում է անտառներում, թփուտներում, լեռնալանջերին: Տերևներն արմատամերձ են, երկար կոթուններով, ձվաձև, սրտաձև հիմքով, ամբողջաեզր, վերևի մասում՝ նրբագեղ նախշերով ծածկված: Ծաղկակի ցողունը տերևազուրկ է, երկարությունը՝ 3-18 սմ, կրում է մեկ ծաղիկ: Ծաղկում է մարտ-ապրիլին: Պտուղը գնդաձև տուփիկ է, սերմերը՝ գորշ, անկյունավոր:

Գրանցված է Կարմիր գրքում:

Արքայապսակ- Հանդիպում Լոռու, Գեղարքունիքի, Տավուշի, Կոտայքի, Վայոց ձորի, Արագածոտնի, Սյունիքի մ արզերում: Աճում է չոր, անպտուղ լանջերին, նոսրատառներում, մարգագետիններում, թփուտներում և այլն: Սոխուկավոր բույս է: Ցողունի բարձրությունը 20-25 սմ է: Տերևները հերթադիր են, նշտարաձև: Ծաղիկները միայնակ են, հազվադեպ՝ կրկնակի, սպիտակավուն, ոսկեդեղնավուն, մանուշակագույն, մուգ ծիրանագույն, հոտավետ: Ծաղկում է մարտ-մայիսին: Պտուղը տուփիկ է, սերմերը՝ մանր, տափակ, դարչնագույն:

Գրանցված է Կարմիր գրքում:

Արևադարձ- Տարածված Լոռու, Արագածոտնի, Կոտայքի, Շիրակի, Տավուշի, Սյունիքի և այլ մարզերում, Երևանի շրջակայքում: Աճում է խոնավ վայրերում, կիսաանապատներում, արոտներում, չոր, քարքարոտ լանջերին, դաշտերի և ճանապարհների եզրերին, աղբոտում խաղողի այգիները: Ցողունի բարձրությունը 20-40 (մինչև 100) սմ է: Տերևները հերթադիր են, պարզ, ամբողջաեզր: Ծաղիկները սպիտակ, դեղին կամ մանուշակագույն են: Ծաղկում է հուլիս-սեպտեմբերին: Պտուղը քառաբաժան է, ընկուզանման:

Գրանցված է Կարմիր գրքում:

Բոշխ Բոհեմի -հանդիպում է միայն Լոռու սարահարթում (1450 մ բարձրություններում), ճահճուտներում: Ցողունը եռանիստ է, երբեմն՝ գլանաձև, առանց հանգույցների, բարձրությունը՝ 1080 սմ: Տերևները նեղ են, գծաձև, կտրող, ծաղիկները՝ միասեռ, հասկիկները՝ բազմածաղիկ: Ծաղկում է մայիս-հուլիսին: Պտուղը եռանիստ ընկուզիկ է:

2018